

Կ-479-13.02.2020,20.05.2020-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Հոգեբուժական օգնության մասին» 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքը շարադրելի հետեւյալ խմբագրությամբ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԳԼՈՒԽ 1**

**ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

*Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան*

1. Սույն օրենքը կարգավորում է քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների հոգեկան առողջության պահպանման, հոգեբուժական օգնության եւ սպասարկման, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների եւ դրանց իրականացման, պաշտպանության եւ սահմանափակման դեպքերի եւ կարգի հետ կապված հարաբերությունները:

*Հոդված 2. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը*

1. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, այլ օրենքներից եւ այլ իրավական ակտերից:

2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ սույն օրենքի նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

*Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հասկացությունները.

1) հոգեկան առողջություն՝ մարդու անօտարելի եւ անփոխանցելի ոչ նյութական բարիք, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, սեփական ներուժը գիտակցելու, կյանքի սթրեսային վիճակները հաղթահարելու, արդյունավետ աշխատելու, ինչպես նաեւ հասարակական կյանքում սեփական ներդրումն ունենալու կարողությունը, կայուն հուզականության դրսեւորումը եւ պահպանումը.

2) հոգեկան առողջության պահպանում՝ հոգեկան առողջության ամրապնդում, հոգեկան խանգարումների կանխարգելում, հոգեկան խանգարում ունեցող անձանց բուժում եւ վերականգնում, հոգեկան լիակատար բարեկեցության վիճակի ապահովում.

3) հոգեկան խանգարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հիվանդությունների դասակարգչով նախատեսված, հոգեկան եւ վարքային խանգարումների դասին համապատասխանող խանգարումներ.

4) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ՝ անձ ում մոտ սույն օրենքով սահմանված կարգով ակտորոշված է հոգեկան խանգարում.

- 5) հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ հոգեբուժական բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպում՝ սույն օրենքով նախատեսված հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում,
- 6) հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման,
- 7) արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման,
- 8) հոգեբուժական կազմակերպություն՝ համապատասխան տեսակի բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որը տրամադրում է հոգեբուժական օգնություն եւ սպասարկում հիվանդանոցային եւ (կամ) արտահիվանդանոցային ձեռով.
- 9) ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կազմում գործող բաժանմունք, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական օգնության եւ սպասարկման՝ հիվանդանոցային պայմաններում իրականացումը.
- 10) հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք՝ հոգեբուժական կազմակերպության կազմում գործող բաժանմունք, որտեղ դատարանի որոշմամբ հարկադիր բուժման նպատակով գտնվում է այն անձը, որը հոգեկան վիճակով վտանգավոր է իր կամ այլ անձանց համար եւ պահանջում է մշտական հսկողություն եւ բուժում.
- 11) բժիշկ-հոգեբույժ՝ բարձրագույն բժշկական կրթություն, որակավորում ու հոգեբուժության գծով հետբուհական մասնագիտացում ստացած, հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնող ֆիզիկական անձ.
- 12) ընտանեկան բժիշկ՝ բարձրագույն բժշկական կրթություն, որակավորում ստացած, վերջին 5 տարիների ընթացքում հոգեկան առողջության վերաբերյալ թեմաներով վերապատրաստում անցած առողջության առաջնային պահպանման օղակում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող ֆիզիկական անձ.
- 13) հոգեբան՝ բարձրագույն հոգեբանության կրթություն ստացած, հոգեբանական ծառայություններ իրականացնող ֆիզիկական անձ:
- 14) հոսպիտալացում՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոժարակամ կամ ոչ հոժարակամ կամ հարկադիր ձեւերով ընդունում հոգեբուժական կազմակերպություն՝ հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելու նպատակով,
- 15) ոչ հոժարակամ բուժում՝ սույն օրենքով սահմանված հիմքերով առանց անձի համաձայնության վերջինիս հոգեբուժական կազմակերպություն տեղափոխելը եւ հոգեբուժական հիվանդանոցային բուժման ենթարկելը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով,
- 16) հարկադիր հսկողություն կամ բուժում՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշման հիման վրա առանց անձի համաձայնության վերջինիս հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային (ընդհանուր հսկողության հոգեբուժական կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում) բուժման ենթարկելը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:
- 17) հոգեբուժական հանձնաժողով՝ առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում նաեւ այլ բժիշկ-մասնագետներից կազմված խումբ, որը ստեղծվում է հոգեբուժական կազմակերպության՝ գործադիր մարմնի իրավական ակտով, ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքում՝ յուրաքանչյուր դեպքի համար, եւ իրավասու է տալ անձի մոտ հոգեկան խանգարման առկայության կամ բացակայության, անձի՝ տվյալ հոգեվիճակում իր կամ հանրության համար վտանգ ներկայացնելու եւ դրանից բխող բոլոր բժշկական հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կամ պատճառաբանված որոշում:

Երկու բժիշկ-հոգեբույժներից կազմված հոգեբուժական հանձնաժողովի բժիշկ-հոգեբույժների իրարամերժ կարծիքի դեպքում գործադիր մարմնի իրավական ակտով հանձնաժողովում ներգրավվում է երրորդ բժիշկ-հոգեբույժը:

18) իրազեկման թերթիկ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից հաստատված ձեռի փաստաթուղթ, որում նշված են հոգեբուժական կազմակերպությունում հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող անձի իրավունքները, ազատությունները եւ դրանց սահմանափակումները,

19) երեխա՝ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված անձ,

20) ֆիզիկական զսպման միջոց՝ ֆիզիկական ուժի եւ (կամ) զսպման մեխանիկական միջոցների (գոտի, ամրակապ) կիրառումն է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պահելու կամ շարժումների զսպման նպատակով,

21) մեկուսացման միջոց՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի տեղավորումն է առանձնացված սենյակում նրա տեղաշարժի սահմանափակման նպատակով,

22) հանդարտեցման մեթոդ՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին նրա կամքին հակառակ դեղերի տրամադրումն է անձի վարքագծի մեղմման (հանդարտեցում) նպատակով,

23) ֆիզիկական ուժ՝ ֆիզիկական զսպման միջոցի տեսակ, որն ուղղված է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զսպմանը կամ անշարժացմանը՝ համաչափ ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով (ձեռքերով հսկողություն):

24) պատշաճ ծանուցում՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին եւ նրա օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում) տեղեկատվության կամ փաստաթղթի առաքում՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ ստացականով ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ հաղորդագրության ձեւակերպում ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ (նախապես նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով) կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ օրինական ներկայացուցչի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով),

25) իրազեկված համաձայնություն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կողմից տրված համաձայնությունը՝ իր համար հասկանալի լեզվով իրեն տրամադրված ամբողջական, օբյեկտիվ եւ հասանալի տեղեկատվության հիման վրա:

26) կոնտակտային անձ՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված անձ:

27) հոգեբուժական վկայարկում՝ անձի մոտ հոգեկան խանգարման առկայությունը կամ բացակայությունը պարզելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման անհրաժեշտությունը գնահատելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման ձեւը որոշելուն ուղղված գործընթաց:

28) հոգեբուժական հետազոտում՝ անձի հոգեկան խանգարման ախտորոշումը ճշտելուն, ինչպես նաեւ հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով իրականացվող գործընթաց:

## ԳԼՈՒԽ 2

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

*Հոդված 4. Հոգեկան առողջության պահպանումը*

1. Հոգեկան առողջության պահպանումը ներառում է՝

1) հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը.

2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց անհրաժեշտ, բազմակողմանի եւ մատչելի հոգեբուժական բժշկական օգնության եւ սպասարկման տրամադրման, խնամքի ու օգնության այլ ձեւերի ապահովումը.

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գործընթացը իրականացվում է հոգեբուժական կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից՝ օրենքով սահմանված լիցենզիայի առկայության դեպքում:

3. Հոգեբուժական բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու կարգն ու պայմանները սահմանվում են սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով:

*Հոդված 5. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքները եւ հոգեբուժական կազմակերպության պարտականությունները*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ իրավունքները.

1) ինքնուրույն լինելու եւ հասարակության մեջ ներգրավվելու.

2) իր նկատմամբ բարեկիրթ, մարդասիրական եւ արժանապատվությունը չնվաստացնող վերաբերմունք ստանալու.

3) իրավունքների եւ օրինական շահերի վերաբերյալ իրազեկ լինելու եւ դրանց պաշտպանության միջոցների ընտրության.

4) հիվանդանոցային հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու ընթացքում բավարար սնունդ ստանալու իրավունք,

5) առողջության պահպանման, այդ թվում՝ շտապ եւ անհետաձգելի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու, ինչպես նաեւ սեփական միջոցների հաշվին ենթարկվելու բժշկական զննության եւ անհրաժեշտության դեպքում բուժման իր նախընտրած բժշկի կողմից.

6) փորձաքննվելու կամ վերափորձաքննվելու բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական իրավասու մարմինների կողմից.

7) ոչ հոժարակամ հոսպիտալացման նպատակով հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելու դեպքում անհապաղ այդ մասին անձամբ տեղեկացնելու իր կոնտակտային անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչին.

8) տալու իրազեկված համաձայնություն եւ ցանկացած փուլում հրաժարվելու գիտական կամ փորձարարական նպատակներով կիրառվող բուժական մեթոդներից եւ միջոցներից.

9) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում մայրենի կամ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալ իր առողջական վիճակի, իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակման դեպքերի վերաբերյալ.

10) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում կոչվելու իր անվամբ կամ ազգանվամբ.

11) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում պահանջել իր ընտրած բժիշկ-հոգեբույժի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին.

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության եւ ութամյա գիշերային քնի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններին.

13) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, հաստատելու նամակագրական կապ.



- 14) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում օգտվելու հեռախոսակապից.
- 15) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հանդիպելու այցելուների հետ.
- 16) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում ունենալ եւ ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվել անձնական հագուստից.
- 17) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում ստանալ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն,
- 18) անձնական ընդունելության խնդրանքով դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, դրա գործունեության նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններին.
- 19) իր իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարան, մարդու իրավունքների պաշտպանին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին կամ միջազգային մարմիններին,
- 20) հոգեբուժական կազմակերպությունում ունենալ լիազոր մարմնի հաստատած պայմաններին համապատասխան կեցության պայմաններ,
- 21) օրենքով չսահմանափակված այլ իրավունքներ:

## 2. Հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է՝

- 1) հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել հոգեբուժական կազմակերպության ներքին կանոնակարգին եւ բուժման սխեմային,
- 2) սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված իրավունքի իրականացման անհնարինության դեպքում ոչ հոժարական հոսպիտալացման վերաբերյալ տեղեկացնել հոգեբուժական թյուն ընդունված անձի կոնտակտային անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչին՝ հնարավոր հասանելի եղանակով (հեռախոսային կապի, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով),
- 3) հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման կամ ենթադրյալ բռնությունների վերաբերյալ զանգատների դեպքերում այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին,
- 4) չխոչընդոտել սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված սեփական միջոցների հաշվին իր նախընտրած բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքի իրականացմանը:
3. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավունքն իրացնելու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի գիտական, բժշկական կամ այլ փորձերի հնարավոր հետեւանքների մասին: Գիտական, բժշկական կամ այլ փորձերի հնարավոր հետեւանքների տեղեկացման կարգը եւ ժամկետները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:
4. Հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը, բժիշկ-հոգեբույժի կողմից իրազեկվում են հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձի իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների մասին՝ սույն օրենքի հավելվածով սահմանված կարգով:
5. Հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրականացման ընթացակարգը սահմանվում է սույն օրենքի հավելվածով:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

7. Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցության համար անհրաժեշտ պայմանները սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 6. Հոգեբուժական կազմակերպությունում գրնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքների սահմանափակման դեպքերը եւ կարգը*

1. Սահմանափակման ենթակա սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 12-15-րդ (բացառությամբ գիշերային քնի իրավունքի) կետերով սահմանվող իրավունքները սահմանափակվում են մինչեւ իրավունքների սահմանափակման համար սույն հոդվածով սահմանված հիմքերի վերացումը՝ օրենքով սահմանված դեպքում կամ հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում (հոգեբուժական հանձնաժողովում ընդգրկված մասնագետների արձակուրդում գտնվելու, հիվանդության, ոչ աշխատանքային ժամի, հաստիքի թափուր լինելու դեպքերում) հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, եթե այդ իրավունքների իրականացումը իրական վտանգ է ներկայացնում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ շրջապատի համար: Հոգեբուժական հանձնաժողովի կամ հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման, ինչպես նաեւ իրավունքների սահմանափակման պատճառների վերացման վերաբերյալ գրառում է կատարվում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավունքը կարող է իրականացվել միայն հոգեկան առողջության խնդիր ունեցող չափահաս այն անձի կողմից, ով սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ունի իրազեկված համաձայնություն տալու իրավունք: սահմանված կարգով անգործունակ չի ճանաչվել եւ ի վիճակի է գիտակցելու իր գործողությունների բնույթը եւ ղեկավարել դրանք:

3. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքի սահմանափակման վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելուց հետո բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը նույն օրը գրավոր իրազեկման թերթիկ հանձնելով տեղեկացնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ պատշաճ ծանուցում է նաեւ օրինական ներկայացուցչին եւ նրանց հանձնում պատճառաբանված որոշման կրկնօրինակը, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

*Հոդված 7. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման կարգն ու պայմանները*

1. Հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում (հոգեբուժական հանձնաժողովում ընդգրկված մասնագետների արձակուրդում գտնվելու, հիվանդության, ոչ աշխատանքային ժամի, հաստիքի թափուր լինելու դեպքերում) հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման հիման վրա հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ:

2. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները կիրառվում են իրեն կամ շրջապատին ֆիզիկական վնաս պատճառելու կամ դրա իրական սպառնալիքի դեպքում եւ եթե այդ սպառնալիքի վերացմանն ուղղված այլ միջոցների (բանավոր խոսքի, ներառյալ համոզելու միջոցով) կիրառումը բավարար չէ այն վերացնելու համար:

3. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները չեն կարող կիրառվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին ծաղրուծանակի ենթարկելու, դիմադրությունը հաղթահարելուն անհամաչափ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելու կամ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելու սպառնալիքի կամ պատիվը կամ արժանապատվությունը նվաստացնելու ձեռով կամ պատժելու նպատակով:

4. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառումը կարող է զուգակցվել, եթե դրանց զուգակցման արդյունքում դրանց կիրառման տեւողությունը կկրճատվի կամ եթե դա անհրաժեշտ է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին կամ այլ անձանց սպառնացող վտանգը կանխելու համար:

5. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումներն են՝

1) հոգեշարժական գրգռվածություն,

2) գիտակցության խանգարմամբ ընթացող վիճակներ,

3) ծանր դիսֆորիա,

4) ագրեսիվ կամ աուտոագրեսիվ վարք,

5) ծանր դեպրեսիվ խանգարումներ՝ պացիենտի արտահայտված աժիտացիայով եւ (կամ) կայուն սուիցիդալ միտումներով,

6) կախյալության ծանր վիճակներ նարկոլոգիական ոլորտի հիվանդների մոտ, որոնք ընթանում են հոգեշարժական գրգռվածությամբ եւ (կամ) ագրեսիայով, եւ (կամ) աուտոագրեսիայով:

6. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներն ընտրելիս բժիշկ-հոգեբույժը պարտավոր է հաշվի առնել դրանց կիրառման հակացուցումները:

7. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները չեն կարող կիրառվել այլ պացիենտների ներկայությամբ, բացառությամբ ֆիզիկական ուժի անհապաղ կիրառման անհրաժեշտություն առաջանալու դեպքերի, որոնք կարող են կիրառվել վարքագծի կտրուկ փոփոխության եւ ագրեսիվացման դեպքերում, այլ անձանց կյանքի կամ առողջություն պաշտպանության եւ վրա հասնելիք ծանր հետեւանքները կանխելու նպատակով):

8. Աշխատանքային օրերին եւ ժամերին ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման դեղորայքային մեթոդների կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին անմիջապես զեկուցվում է հոգեբուժական կազմակերպության բաժանմունքի վարիչին եւ հոգեբուժական կազմակերպության տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը:

9. Բժիշկ-հոգեբույժը՝

1) ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում նույն օրը դրանց կիրառումը հիմնավորող գրառում է կատարում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ինչպես նաեւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում,

2) երեխայի, ինչպես նաեւ անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է նրանց օրինական ներկայացուցիչներին:

10. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանի ձեւը հաստատում է լիազոր մարմինը:

11. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառման ամբողջ ժամանակահատվածում պացիենտը մշտապես գտնվում է բուժանձնակազմի հսկողության տակ:

12. Եթե ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը արդյունք չի տալիս, հոգեբուժական հանձնաժողովը, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը ընդունում է ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը շարունակելու մասին որոշում եւ յուրաքանչյուր դեպքի մասին աշխատանքային օրերին եւ ժամերին զեկուցում է հոգեբուժական կազմակերպության բաժանմունքի վարիչին եւ հոգեբուժական կազմակերպության տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին եւ ժամերին կիրառելու դեպքում՝ զեկուցում է հաջորդ աշխատանքային օրը:

*Հոդված 8. Ֆիզիկական զսպման միջոցների կիրառման առանձնահատկությունները*

1. Ֆիզիկական զսպումը մեխանիկական միջոցներով իրականացնելիս կիրառվում են տարբեր նյութերից պատրաստված ոչ տրավմատիկ, հարմարավետ օգտագործմամբ ամրակապեր, գոտիներ, հատուկ հագուստներ:
  2. Ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցները պետք է լինեն հեշտությամբ արծակվող եւ չպետք է ցավ պատճառեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին:
  3. Եթե ֆիզիկական զսպումն իրականացվում է ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով, ապա դա պետք է իրականացվի այնպիսի ձեւով, որպեսզի չտոնահարվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արժանապատվությունը եւ նվազագույնի հասցվեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին վնասելու կամ ցավ պատճառելու ռիսկերը:
  4. 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում ֆիզիկական զսպման կիրառման ընդհանուր տեսողությունը չպետք է գերազանցի՝
    - 1) 18 տարեկանից բարձր անձանց համար՝ 4 ժամը,
    - 2) 9-17 տարեկան անձանց համար՝ 2 ժամը:
  5. Մինչեւ 9 տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցներ:
  6. Ֆիզիկական զսպումն իրականացվում է միջին եւ կրտսեր բուժանձնակազմի կողմից՝ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի հսկողությամբ:
  7. Ոչ ուշ, քան 30 րոպե պարբերականությամբ բժիշկ-հոգեբույժը զննում է հոգեկան առողջության խնդիր ունեցող ֆիզիկական զսպման ենթարկված անձին, որի ընթացքում ստուգվում է կապերի ամրությունը, վերջույթների արտաքին տեսքը (գունավորում, հնարավոր այտուցվածություն), վերջույթների ջերմությունը, կապիչից ստորեւ գտնվող վերջույթների անոթների պոլսացիան, կապիչի տեղադրման հատվածում ցավի զգացողությունը, կապիչից ստորեւ վերջույթների զգայունությունը եւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարվում է համապատասխան գրառում:
  8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պարբերականությամբ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զննության արդյունքում բժիշկ-հոգեբուժը պարզում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը շարունակելու անհրաժեշտության հարցը: Ֆիզիկական զսպման միջոցների կիրառման պատճառների վերացման դեպքում հոգեբուժական հանձնաժողովը, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը որոշվում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը դադարեցնել:
- Հոդված 9. Հանդարտեցման մեթոդների կիրառման առանձնահատկությունները*
1. Հանդարտեցման նպատակով տրամադրվում են լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկով սահմանված դեղերը:
  2. Եթե պերորալ դեղերի ընդունումն անհնարին է կամ անհրաժեշտ է սեդատիվ էֆեկտի արագ ստացում, կիրառվում է պարենտերալ ճանապարհը (միջմկանային կամ ներերակային):
  3. Հանդարտեցնող դեղերի կողմնակի ազդեցությունները կառավարելու նպատակով կարող են կիրառվել կորեկտորներ հանդիսացող դեղեր, ինչպես նաեւ հնարավոր սոմատիկ խնդիրների դեպքում՝
- սոմատիկ վիճակը կարգավորող դեղեր՝ ըստ բժշկական ցուցումների:
4. Դեղորայքային հանդարտեցման միջոցներ կիրառող բժիշկը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ ժամ պարբերականությամբ զննել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին (անոթազարկը, շնչառության արագությունը, մարմնի ջերմաստիճանը, հիդրատացիայի աստիճանը եւ գիտակցության մակարդակը) եւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարել համապատասխան գրառում:

5. Հանդարտեցման մեթոդի կիրառման արդյունքում անհրաժեշտ հանգստացնող (սեդատիվ) արդյունքի հասնելուց անմիջապես հետո ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները պետք է անհապաղ դադարեցվեն, եթե այդպիսիք կիրառվել են:

*Հոդված 10. Մեկուսացման միջոցների կիրառման առանձնահատկությունները*

1. Մեկուսացման միջոցների կիրառումն իրականացվում է այդ նպատակով առանձնացված, հատուկ կահավորում ունեցող սենյակում:

2. Մեկուսացման միջոցների կիրառման դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը պետք է գտնվի մշտական հսկողության ներքո: Սույն դեպքում համապատասխան բուժաշխատողը պետք է գտնվի մեկուսացման սենյակից դուրս կամ մեկուսացման սենյակի հետ ընդհանուր պատուհանով միացված հարեան սենյակում այնպես, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը հնարավորություն ունենա ամբողջությամբ տեսնել բուժաշխատողին, իսկ բուժաշխատողը հնարավորության ունենա հսկելու եւ լսելու հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Տեսանկարահանման միջոցները չեն կարող փոխարինել անձնակազմի մշտական ներկայությանը:

3. Մեկուսացման միջոցները 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում կիրառվում են 18 տարեկանից բարձր անձանց համար առավելագույնը 4 ժամ տեւողությամբ, իսկ 9-17 տարեկան անձանց համար՝ առավելագույնը 2 ժամ տեւողությամբ:

4. Մինչեւ 9 տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել մեկուսացման միջոցներ:

*Հոդված 11. Պետության կողմից տրամադրվող երաշխիքները հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնելիս եւ հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացումը վճարովի հիմունքներով*

1. Պետությունը երաշխավորում է պետության միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը՝ մարդասիրության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ դեպքերում պետությունը յուրաքանչյուր հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար երաշխավորում է՝

1) բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում անհետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը, ինչպես նաեւ հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը.

2) բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում հոգեբուժական փորձաքննության բոլոր ձեւերի իրականացումը, ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության իրականացումը.

3) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալ-կենցաղային վիճակին օժանդակությունը.

4) խնամակալությունը.

5) իրավական հարցերով օժանդակությունը հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ժամանակահատվածում.

6) հոգեկան առողջության խնդիր ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցումը եւ խնամքը.

7) արտակարգ իրավիճակների ժամանակ հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպումը.

8) Կառավարության սահմանած կարգին համապատասխան դեղերի անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրումը:

3. Իրավաբանական անվճար օգնությունը տրամադրվում է հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի նշանակած փաստաբանի կողմից:

4. Հոգեբուժական կազմակերպությունները պետության կողմից երաշխավորված անվճար հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացնում են լիազոր մարմնի հետ կնքած պայմանագրով նախատեսված հոգեբուժական բժշկական եւ հարբժշկական օգնության եւ սպասարկման տեսակների եւ ծավալների շրջանակներում:

5. Լիազոր մարմնի հետ կնքած պայմանագրում չընդգրկված հոգեբուժական բժշկական եւ հարբժշկական օգնության եւ սպասարկման տեսակները եւ ծավալները իրականացվում են վճարովի հիմունքներով: Հոգեբուժական օգնության եւ սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

6. Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց անհետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը տրամադրվում է անվճար հիմունքներով:

7. Բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակում պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպումն ու իրականացումը նկարագրող եւ կանոնակարգող չափորոշիչը հաստատում է լիազոր մարմինը:

8. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ եւ 6-րդ կետերով սահմանված միջոցառումներն իրականացնում է աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության բնագավառի պետական կառավարման մարմինը:

*Հոդված 12. Կառավարության լիազորությունները հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման եւ սոցիալական պաշտպանության ոլորտում*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը, սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով Կառավարությունը՝

1) ստեղծում է հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մեծահասակների եւ երեխաների համար,

2) ապահովում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հանրակրթական եւ մասնագիտական ուսուցում.

3) ստեղծում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց բուժական-արտադրական ուղղվածության կազմակերպություններ՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային թերապիայի, նոր մասնագիտությունների տիրապետման եւ զբաղվածության ապահովման համար, միջոցներ է ձեռնարկում աշխատանքի հարմարեցված պայմաններով աշխատատեղեր կամ հատուկ արտադրամասեր ստեղծելու ուղղությամբ.

4) ստեղծում է կացարաններ սոցիալական կապերը կորցրած հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար.

5) սահմանում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները եւ դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները եւ դրանց շահագործման ժամկետները:

### ԳԼՈՒԽ 3

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՁԻ ՄՈՏ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ ԱԽՏՈՐՈՇԵԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՎԱՋՆԵՐԸ

*Հոդված 13. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողները*

1. Հոգեբուժական օգնությունն ու սպասարկումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են բժիշկ-հոգեբույժները եւ ընտանեկան բժիշկները՝ մասնագիտական անհրաժեշտության դեպքում համագործակցելով հոգեբանի, ինչպես նաեւ այլ բժիշկ-մասնագետների հետ:

2. Ընտանեկան բժշկի կողմից տրամադրվող հոգեբուժական օգնության եւ սպասարկման ծավալը եւ կարգը սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 14. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների անկախությունը*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնելիս հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողները անկախ են իրենց կայացրած մասնագիտական որոշումներում եւ ղեկավարվում են մարդասիրության, բժշկական էթիկայի, պացիենտի լավագույն շահերով առաջնորդվելու սկզբունքներով:

2. Բժիշկ-հոգեբույժը, ում կարծիքը չի համընկնում հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հետ, իրավունք ունի կազմել սեփական եզրակացությունը, որը պարտադիր կցվում է հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությանը եւ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթին:

*Հոդված 15. Անձի մոտ հոգեկան խանգարում ախտորոշելուն ներկայացվող պահանջը*

1. Անձի մոտ հոգեկան խանգարում կարող է ախտորոշվել միայն բժիշկ-հոգեբույժի կողմից:

2. Անձի հոգեկան առողջության վերաբերյալ այլ բժիշկ-մասնագետի (ոչ բժիշկ-հոգեբույժի) եզրակացությունը հիմք չէ անձի մոտ հոգեկան խանգարում ախտորոշելու համար:

**ԳԼՈՒԽ 4**

**ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

*Հոդված 16. Անձի հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկություններ փոխանցելուն ներկայացվող պահանջները*

1. Անձի՝ բժիշկ-հոգեբույժին կամ հոգեբուժական կազմակերպություն դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման եւ բուժման ընթացքում պարզված տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչին՝ նրանց պահանջով: Բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները առանց անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում առանց օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել այլ անձանց կամ մարմիններին՝ միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով փոխանցվել միայն՝

1) բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող այլ անձանց կամ կազմակերպություններին (հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կյանքին սպառնացող վիճակի կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդության կամ դրա կասկածի դեպքում կամ եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն իր հոգեկան վիճակով ունակ չէ հասկանալու եւ համաձայնություն տալու անձնական տվյալների փոխանցմանը եւ չունի օրինական ներկայացուցիչ)՝ ախտորոշման կամ հետազոտման կամ բուժման նպատակով, եթե առկա է մասնագիտական անհրաժեշտություն, այն է՝ առանց այդ տեղեկությունների հնարավոր չէ իրականացնել անձի պատշաճ ախտորոշումը կամ հետազոտումը կամ բուժումը,

2) լիազոր մարմինի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի եւ որակի ստուգման աշխատանքներ իրականացնելիս,

3) հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս,

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական եւ պրոբացիայի ծառայություններին՝ օրենքով նախատեսված դեպքերում,

5) զինվորական կոմիսարիատների եւ այլ ռազմաբժշկական հանձնաժողովների հարցման դեպքում՝ ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու նպատակով,

6) առողջապահության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հարցման դեպքում՝ առողջապահության, սանիտարահամաճարակային անվտանգության, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքի անվտանգության ապահովման եւ աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս,

7) Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ վարորդական իրավունք տրամադրելու (փոխանակելու), զենքի շրջանառությունը վերահսկելու, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակներով,

8) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Հոգեբուժական կազմակերպություններում բժշկական գաղտնիք համարվող տվյալները պահպանվում են Կառավարության կողմից սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով սահմանված առողջապահության ոլորտի փաստաթղթերի պահպանության համար սահմանված ժամկետներով:

4. Բժշկական գաղտնիք համարվող տվյալներ մշակողները պարտավոր են պահպանել իրենց աշխատանքային կամ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

#### ԳԼՈՒԽ 5

### ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ

*Հոդված 17. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելուն ներկայացվող ընդհանուր պահանջները եւ հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալու համաձայնությունը*

1. Հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր

իրազեկված համաձայնության (դիմում) դեպքում՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տրվում է նրանց կողմից, եթե՝

1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձն ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետեւաքնները,

2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին,

3) կոյուրացնեն նրանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե հոգեբուժական



հանձնաժողովի եզրակացությամբ նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել հոգեբուժական միջամտություն:

4. 16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է:

6. Հոգեբուժական բժշկական օգնություն եւ սպասարկման շրջանակում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը պարտավոր է անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում նաեւ օրինական ներկայացուցչին՝

1) ներկայանալ որպես բժիշկ-հոգեբույժ,

2) տրամադրել տեղեկություններ հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տեսողության, ինչպես նաեւ կողմնակի ազդեցության եւ ակնկալվող արդյունքների, հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու ու հրաժարվելու հետեւանքների մասին եւ դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթում կատարել համապատասխան գրառումներ եւ հաստատել դրանք ստորագրությամբ լիազոր մարմնի սահմանված կարգով:

7. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալու համար դիմած անձն, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվել հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալուց կամ պահանջել դադարեցնել այն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում նաեւ օրինական ներկայացուցչին բժիշկ-հոգեբույժի կողմից պետք է պարզաբանվի հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու հնարավոր հետեւանքները:

8. Հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու փաստը բժիշկ-հոգեբույժի կողմից գրառվում է անձի բժշկական փաստաթղթում եւ հաստատվում բժիշկ-հոգեբույժի եւ հրաժարվող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի ստորագրությամբ:

9. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելու վերաբերյալ տվյալները բժիշկ-հոգեբույժի կողմից գրառվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում եւ հաստատվում բժիշկ-հոգեբույժի ստորագրությամբ:

10. Բժշկական փաստաթղթի ձեւերը, դրանց լրացման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 18. Հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման ձեւերը եւ դրանց բովանդակությունը*

1. Հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացվում է արտահիվանդանոցային եւ հիվանդանոցային ձեւերով:

2. Արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը ներառում է.

- 1) հոգեբուժական վկայարկումը.
- 2) հետազոտումը՝ ախտորոշման նպատակով,
- 3) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառումը.
- 4) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խորհրդատվական բժշկական օգնության տրամադրումը.
- 5) հաշվառման մեջ գտնվող՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց արտահիվանդանոցային շարունակական բուժումը եւ հսկողությունը.

- 6) արտահիվանդանոցային փորձաքննությունը.
  - 7) հարկադիր բուժումը եւ հսկողությունը՝ դատարանի որոշման հիման վրա:
  - 8) առողջ ապրելակերպի մասին քարոզչությունը,
  - 9) բժշկական ցուցումների համաձայն ուղեգրում հիվանդանոցային պայմաններում հետազոտման, բուժման կամ մասնագիտական խնամքի նպատակով:
3. Հիվանդանոցային հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը ներառում է՝
- 1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց ընդունումը.
  - 2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հետազոտումը,
  - 3) հիվանդանոցային բուժումը.
  - 4) հիվանդանոցային փորձաքննությունը.
  - 5) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց դուրսագրումը.
  - 6) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հիվանդանոցային մասնագիտացված խնամքը.
  - 7) ոչ հոժարակամ հոսպիտալացումը կամ հարկադիր բուժումը՝ դատարանի որոշման հիման վրա:
4. Արտահիվանդանոցային եւ հիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:
5. Զինձառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով:

*Հոդված 19. Հոգեբուժական վկայարկումը*

1. Հոգեբուժական վկայարկումն իրականացվում է անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի իրազեկված համաձայնությամբ:
2. Հոգեբուժական վկայարկումն իրականացվում է առանց անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության, այն դեպքերում, երբ անձի գործողությունները հիմք են տալիս ենթադրելու, որ անձը ունի հոգեկան խանգարում, որի հետեւանքով նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար.
3. Հոգեբուժական վկայարկման արդյունքում, եթե բժիշկ-հոգեբույժի կողմից հաստատվում է, որ անձը իր ներկա հոգեկան վիճակով պայմանավորված վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, ապա անձը հոսպիտալացվում է հոժարակամ կամ սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:

*Հոդված 20. Հոգեբուժական հետազոտումը եւ բուժումը*

1. Հոգեբուժական հետազոտումն իրականացվում է անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
2. Հոգեբուժական հետազոտման (ներառյալ ախտորոշումը) կամ բուժման իրականացումը չի կարող պայմանավորվել հասարակության կողմից ընդունված բարոյական կամ մշակութային կամ քաղաքական կամ կրոնական արժեքների հետ անձի անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների հետ:

3. Հոգեբուժական հետազոտման (ներառյալ ախտորոշման) եւ բուժման մեթոդները, կիրառվող դեղերը, բժշկական նշանակության ապրանքները կարող են օգտագործվել բացառապես ախտորոշիչ եւ բուժական նպատակներով հոգեկան խանգարման բնույթին եւ դրա բուժման համար անհրաժեշտ միջոցներին համապատասխան եւ որեւէ դեպքում չեն կարող կիրառվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պատժելու նպատակով կամ այլ անձանց կողմից հետապնդվող այլ նպատակներով:

*Հոդված 21. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հաշվառումը*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք հոգեբուժական կազմակերպությունների կողմից ենթակա են հաշվառման:

2. Անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու հիմք է հանդիսանում նրա մոտ առաջին անգամ ախտորոշված հոգեկան խանգարման առկայությունը:

3. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառումից հանելու հիմք են հանդիսանում՝

1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մահը.

2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն դադարեցնելը՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն,

3) հոգեբուժական հանձնաժողովի կողմից գրավոր տրված «ներկայում հոգեպես առողջ է» եզրակացությունը:

4. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու եւ հաշվառումից հանելու կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 22. Հոժարակամ հոսպիտալացման հիմքերը*

1. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացման հիմք են հանդիսանում անձի հոգեկան խանգարման առկայությունը եւ բժիշկ-հոգեբույժի՝ անձի հիվանդանոցային ձեռով հետազոտության կամ բուժման անհրաժեշտության մասին եզրակացությունը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը: Փորձաքննության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

2. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացումը կարող է իրականացվել միայն անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի կամ գրավոր իրազեկված համաձայնության հիման վրա: Անգործունակ ճանաչված անձին սույն հոդվածին համապատասխան ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոսպիտալացնելուց հետո խնամակալը այդ մասին «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:

3. Առանց անձը հաստատող փաստաթղթի անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը գրավոր տեղեկացնում են իրավապահ մարմիններին հոսպիտալացման փաստի վերաբերյալ:

4. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի օտարերկրացի լինելու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր տնօրենը նույն օրը, իսկ ոչ ախտանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը միաժամանակ գրավոր տեղեկացնում է նաեւ լիազոր մարմնին, որն էլ իր հերթին այդ մասին հայտնում է արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման մարմնին:

*Հոդված 23. Հոժարակամ հոսպիտալացված անձի դուրսգրումը*

1. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հոժարակամ հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դուրսգրումը իրականացվում է՝

1) անձի ցանկությամբ կամ,

- 2) անձի առողջացման եւ հոգեկան վիճակի բավարար լինելու դեպքում, եթե վերացել է հետագա հիվանդանոցային ձեռով բուժման անհրաժեշտությունը՝ բժշկ-հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ,
- 3) հետազոտման կամ փորձաքննության ժամկետները ավարտվելու դեպքում:

2. Դուրսգրումից առաջ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը պատշաճ ծանուցում է անգործունակ ճանաչված անձի կամ երեխայի օրինական ներկայացուցչին՝ ծանուցման մեջ նշելով դուրսգրման օրը, ամիսը տարին եւ ժամը:

3. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարական հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը, իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվել հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալուց կամ պահանջել դադարեցնել այն:

*Հոդված 24. Ոչ հոժարական հոսպիտալացման հիմքը եւ կարգը*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն առանց իր, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական վկայարկման արդյունքում կարող է ոչ հոժարական հոսպիտալացվել՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով, եթե՝ առանց հոսպիտալացման անձի բուժումն արդյունավետ չի կարող կազմակերպվել եւ հոգեբուժական օգնության ուշացումը կարող է վտանգ ներկայացնել անձի կյանքին, առողջությանը կամ շրջապատին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում հոսպիտալացվելուց հետո 72 ժամվա ընթացքում՝

1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը պարտադիր հետազոտվում է հոգեբուժական հանձնաժողովի կողմից եւ

2) ոչ հոժարական հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում, հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու համար: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչեւ դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում է միայն շտապ եւ անհետաձգելի հոգեբուժական օգնություն եւ սպասարկում:

3. Հիվանդանոցային ոչ հոժարական բուժում իրականացնող բժշկ-հոգեբույժը ամիսը առնվազն մեկ անգամ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին՝ անձի նկատմամբ ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննում եւ տալիս է եզրակացություն ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու մասին:

4. Ոչ հոժարական բուժումը կարող է տեւել ոչ ավել, քան վեց ամիս: Եթե վեց ամիսը լրանալու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ չեն վերացել ոչ հոժարական բուժման սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը, ապա վեցամսյա ժամկետը լրանալուց հետո 72 ժամվա ընթացքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում դատարան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու պահանջով: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչեւ դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում է միայն շտապ եւ անհետաձգելի հոգեբուժական օգնություն եւ սպասարկում:

5. Մինչեւ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ ոչ հոժարական բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական

կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով:

*Հոդված 25. Դատահոգեբուժական փորձաքննության տեսակները եւ դրա իրականացման առանձնահատկությունները*

1. Դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել ինչպես հիվանդանոցային պայմաններում (հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն), այնպես էլ արտահիվանդանոցային պայմաններում (արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն):

2. Դատահոգեբուժական փորձաքննությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված դեպքերում եւ կարգով՝ համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման հիման վրա:

3. Դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել միայն բժիշկ-հոգեբույժներից, իսկ փորձաքննություն նշանակելու որոշման մեջ նախատեսված լինելու դեպքում՝ նաեւ այլ բժիշկ-մասնագետներից կազմված փորձագետների հանձնաժողովի կողմից: Փորձագետների հանձնաժողովի եզրակացությունը հաստատվում է դրա անդամների ստորագրությամբ:

4. Դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնող (փորձագետների) հանձնաժողովը պետք է բաղկացած լինի առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից: Առավել բարդ դեպքերում

5. Հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է մինչեւ 45-օրյա ժամկետում, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է 25-օրյա ժամկետում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված հացագործությունների մասին հաղորդումների քննարկման փուլում նշանակված փորձաքննությունների, որոնց դեպքում հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է մինչեւ 24-օրյա ժամկետում, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է 15-օրյա ժամկետում:

6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության կարգով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության իրականացմանը փորձաքննության ենթարկվող անձի ներկայանալն ապահովում է փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող մարմինը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ վարչական դատավարության կարգով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության իրականացմանը՝ համապատասխան դատավարության կողմը:

7. Դատահոգեբուժական փորձաքննության համար ներկայացված անձը չի ենթարկվում փորձաքննության՝ անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում, կամ երբ հնարավոր չէ ներկայացված փաստաթղթերի հիման վրա հավաստիանալ, որ փորձաքննությանը ներկայացված անձը այն անձն է, ով նշված է փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ:

8. Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը տրվում է փորձաքննության ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ժամկետում:

9. Եթե դատահոգեբուժական փորձաքննության իրականացման արդյունքում փորձագետները հանգել են միասնական կարծիքի, ապա կազմվում է մեկ միասնական եզրակացություն, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Դատահոգեբուժական փորձաքննության արդյունքների վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու դեպքում, նման կարծիք ունեցող փորձագետի կողմից կազմվում է առանձին եզրակացություն, որը հաստատվում է տվյալ փորձագետի ստորագրությամբ:

10. Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաեւ հատուկ կարծիք պարունակող եզրակացությունը կազմվում է երեք օրինակից, որից մեկը տրվում է դատահոգեբուժական փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձին (մարմին), մյուս օրինակը կցվում է փորձաքննության ենթարկված անձի բժշկական փաստաթղթերին, երրորդ օրինակը տրամադրվում է դատահոգեբուժական փորձաքննության ենթարկված անձին:

*Հոդված 26. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հարկադիր հսկողությունը կամ բուժումը*

1. Անձին հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային բուժման ընդունելու համար հիմք է տվյալ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը: Անձի հարկադիր արտահիվանդանոցային հսկողությանը կամ բուժմանը կամ հիվանդանոցային (ընդհանուր հսկողության հոգեբուժական կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում) բուժմանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

2. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային բուժման ընդունվելիս հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը սույն օրենքով սահմանված կարգով տեղեկացվում է իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, հարկադիր հսկողություն կամ բուժում ստանալու նպատակի եւ պատճառների մասին:

3. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության եւ բուժման նպատակով հոգեբուժական կազմակերպություն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի այցերի հաճախականությունը սահմանվում է բժիշկ-հոգեբույժի կողմից՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակին համապատասխան, ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

4. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողություն կամ բուժում կամ հիվանդանոցային բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը առնվազն վեց ամիսը մեկ անգամ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին՝ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քննում եւ տալիս է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու մասին եզրակացություն:

5. Հոգեբուժական հանձնաժողովի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին եզրակացություն տալու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը տասն աշխատանքային օրվա ընթացքում, կցելով հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը, միջնորդություն է ներկայացնում դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին:

6. Հարկադրանքի միջոցը փոխելու կամ դադարեցնելու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը 2-օրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է անձի բնակության վայրի Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժին:

7. Սույն օրենքով սահմանված դրույթները այնքանով, որքանով կիրառելի են, տարածվում են նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածով սահմանված որպես անվտանգության միջոց անձին հոգեբուժական կազմակերպությունում տեղավորելու դեպքերի վրա:

## ԳԼՈՒԽ 6

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱԾՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Հոդված 27. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների բողոքարկումը եւ պարասխանարվությունը սույն օրենքի պահանջների խախտման համար*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունները (անգործությունը), որոշումները, մասնագիտական եզրակացությունները կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

## ԳԼՈՒԽ 7

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

*Հոդված 28. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը*

1. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

*Հոդված 29. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկումը*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով:

2. Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը: Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է:

3. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը, ինչպես նաեւ հասարակական դիտորդների խմբի անհատական կազմը եւ իրավասությունը սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 30. Հասարակական մշտադիտարկման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին տեղեկատվություն տրամադրելը*

1. Հասարակական դիտորդների խումբը պարտավոր է մշտադիտարկումների արդյունքում արձանագրված թերությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

**Հավելված**

**«Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն ընթացակարգը կարգավորում է հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԵՎ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2. Հոգեբուժական կազմակերպությունն իր տարածքում տեղադրում է առնվազն մեկ տաքսոֆոն (հեռախոս) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցության սակագները՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավունք ունի յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարելու առնվազն երեք անվճար հեռախոսազանգ Հայաստանի Հանրապետության տարածքում, ընդ որում առաջին հեռախոսազանգի իրավունքը ապահովվում է հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելուց անմիջապես հետո:

4. Հոգեբուժական կազմակերպությունն իր տարածքում տեղադրում է առնվազն մեկ փոստարկղ՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

5. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը եւ դրա գաղտնիությունը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմն ապահովում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի գրած նամակների փոխանցումը փոստային ծառայությանը եւ փոստային առաքման անդորրագրի, ինչպես նաեւ փոստով ստացված, չբացված նամակների հանձնումը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի ուղարկված եւ ստացած նամակները չեն կարող ենթարկվել գրաքննության հոգեբուժական կազմակերպության կողմից:

3. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄԸ

6. Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, այցելուների հետ ազատ հանդիպելու պայմաններ է ստեղծում՝ չխախտելով տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից հաստատած ներհիվանդանոցային ռեժիմը:

7. Երեխայի՝ ինչպես նաեւ անգործունակ ճանաչված անձանց, այցելուների հանդիպման ժամանակ բժշկական համապատասխան ցուցումների դեպքում բժիշկ-հոգեբույժի հանձնարարությամբ ուղեկցում է տվյալ բաժանմունքի բուժքույրը, որի վերաբերյալ գրառում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

8. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք իրավունք ունեն՝

1) անձամբ, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի միջոցով, հոգեբուժական կազմակերպություն տեղափոխել լիազոր մարմնի կողմից սահմանված ցանկին համապատասխան առաջին անհրաժեշտության իրեր եւ պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, կամ

2) իրենց միջոցների հաշվին ձեռք բերել (այդ թվում՝ էլեկտրոնային հեռահաղորդակցության միջոցներով) առաջին անհրաժեշտության իրեր եւ պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, ընդ որում՝

ա. գործունակ լինելու դեպքում անձամբ, եթե տվյալ հոգեբուժական կազմակերպության տարածքում առկա է առեւտրի օբյեկտ,



բ. անգործունակ ճանաչված լինելու դեպքում իրենց օրինական ներկայացուցիչների կամ համապատասխան աշխատակցի միջոցով:

#### 4. ԹԵՐԹԵՐՈՎ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9. Յուրաքանչյուր հոգեբուժական կազմակերպությունում պետք է առկա լինի թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրություն իրականացնող կազմակերպության բաժանորդագրության անվանացանկ, որը պետք է հասանելի լինի հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց:

10. Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը պարտավոր է ապահովել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կողմից թերթերի բաժանորդագրությունը եւ բաժանորդագրված թերթերի եւ ամսագրերի հանձնումը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին:

5. ԱՆՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԻՆՊԵՍ ՆԱԵՎ ԲՈՒԺՄԱՆ, ՀԵՏԱՋՈՏՄԱՆ, ԴՈՒՐՍԳՐՄԱՆ, ՕՐԵՆՔՈՎ ԱՎՄԱՆՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ ԿԱՄ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԱՐԻՉԻՆ ԴԻՄԵԼԸ, ԻՐ ԸՆՏՐԱԾ ԲԺԻՇԿՈՂԵԲՈՒՅԺԻ՝ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

11. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի գրավոր կամ բանավոր կարգով անձնական ընդունելության համար դիմել հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, ով պարտավոր է դիմումը ստանալու նույն օրը, իսկ դրա անհնարինության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հետ անձնական հանդիպումը (ընդունելություն):

12. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իր բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով գրավոր կամ բանավոր դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին կամ բաժանմունքի վարիչին:

13. Հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը կամ բաժանմունքի վարիչը, ստանալով դիմումը կամ բանավոր հարցումը եւ այդ մասին նշում կատարելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ոչ ավելի քան 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան տեղեկատվությունը տրամադրում են դիմումատուին եւ ձեռնամուխ լինում համապատասխան հարցերի կարգավորմանը:

14. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն իրավունք ունի գրավոր կամ բանավոր դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին՝ պահանջելով սեփական միջոցների հաշվին ապահովել իր ընտրած բժշկ-հոգեբույժի մասնակցությունը հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին, բժշկական զննման եւ (կամ) բուժման ընթացքին:

15. Դիմումը կամ բանավոր հաղորդագրությունը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դիմումում նշված բժշկ-հոգեբույժին եւ բժշկ-հոգեբույժի համաձայնությունը ձեռք բերելով՝ տվյալ բժշկ-հոգեբույժը մասնակցում է հանձնաժողովային բժշկական զննման եւ (կամ) բուժման ընթացքին: Դիմումում նշված բժշկ-հոգեբույժի հրաժարվելը չի սահմանափակում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի՝ այլ բժշկ-հոգեբույժ ընտրելու իրավունքը:

6. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԱՎՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

16. Հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը բժշկ-հոգեբույժի կողմից ընդունման օրվանից մեկ օրացուցային օրվա ընթացքում իրազեկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, ինչպես նաեւ հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տեղության, ինչպես նաեւ կողմնակի ազդեցության եւ ակնկալվող

արդյունքների, հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու հետեւանքների վերաբերյալ՝ այդ մասին համապատասխան նշում կատարելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

17. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան իրազեկելու փաստը հաստատվում է սույն օրենքով նախատեսված իրազեկման թերթիկ հանձնելով: Իրազեկման թերթիկը կազմվում է 2 օրինակից, որոնք ստորագրվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի եւ իրազեկման համար պատասխանատուի կողմից: Իրազեկման թերթիկի մեկ օրինակը հանձնվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում պատշաճ ծանուցմամբ՝ նաեւ օրինական ներկայացուցչին, իսկ մյուս օրինակը կցվում է բժշկական փաստաթղթին:

18. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի օտարերկրացի լինելու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր տնօրենը նույն օրը, իսկ ոչ ախտանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը միաժամանակ գրավոր տեղեկացնում է նաեւ լիազոր մարմնին, որն էլ իր հերթին այդ մասին հայտնում է արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման մարմնին: Առանց անձը հաստատող փաստաթղթի անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը գրավոր տեղեկացնում են իրավապահ մարմիններին բուժման փաստի վերաբերյալ:

19. Հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը գրավոր սահմանում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան իրազեկելու համար պատասխանատու անձանց:

20. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան թարգմանչի միջոցով իրազեկվում է այն լեզվով եւ այն եղանակով, որը հասկանալի է տվյալ անձի համար: Ընդ որում, տվյալ իրավունքների, իրավունքների սահմանափակումների իրազեկումը ներառում է նաեւ դրանց իրականացման մեխանիզմների պարզաբանումը: Սույն կետով սահմանված կարգը տարածվում է նաեւ անձի իրավունքների բանավոր իրազեկման կարգի վրա: Թարգմանչի ծախսերը փոխհատուցվում են հոգեբուժական կազմակերպության կողմից:

21. Եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, ելնելով իր առողջական վիճակից, ի վիճակի չէ հասկանալ իր իրավունքները կամ ստորագրել իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքների եւ պարտականությունների մասին իրազեկվում է միայն նրա օրինական ներկայացուցիչը, եթե այդպիսին առկա է, որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը: Դրա մասին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

22. Եթե հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն իր առողջական վիճակից ելնելով չի ստորագրել իրազեկման թերթիկը, ապա դրա վերաբերյալ նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում, իսկ անձի առողջական վիճակի բարելավման դեպքում տվյալ անձը իրազեկվում է իր իրավունքների, իրավունքների սահմանափակումների մասին եւ նրան առաջարկվում է ստորագրել իրազեկման թերթիկը, իսկ դրանից հրաժարվելու դեպքում կրկին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

23. Անկախ տվյալ անձի տվյալ հոգեբուժական կազմակերպությունում նախկինում բուժվելու փաստից, յուրաքանչյուր անգամ այդ կազմակերպություն ընդունվելու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, սույն ընթացակարգին համապատասխան, իրազեկվում են իր իրավունքների, իրավունքների սահմանափակումների մասին:»:

## **ՀՈԴՎԱԾ 2.** Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈԴՎԱԾ 1.** «Հոգեբուժական օգնության մասին» 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀՈԳԵՐՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԳԼՈՒԽ 1**

**ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

*Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան*

1. Սույն օրենքը կարգավորում է քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների հոգեկան առողջության պահպանման, հոգեբուժական օգնության եւ սպասարկման, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների եւ դրանց իրականացման, պաշտպանության եւ սահմանափակման դեպքերի եւ կարգի հետ կապված հարաբերությունները:

*Հոդված 2. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը*

1. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, այլ օրենքներից եւ այլ իրավական ակտերից:

2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ սույն օրենքի նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

*Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

1. Սույն օրենքում օգտագործվում են հետեյալ հասկացությունները.

1) հոգեկան առողջություն՝ մարդու անօտարելի եւ անփոխանցելի ոչ նյութական բարիք, որը ներառում է շրջակա միջավայրի համապատասխան ընկալումը, սեփական ներուժը գիտակցելու, կյանքի սթրեսային վիճակները հաղթահարելու, արդյունավետ աշխատելու, ինչպես նաեւ հասարակական կյանքում սեփական ներդրումն ունենալու կարողությունը, կայուն հուզականության դրսեւորումը եւ պահպանումը.

2) հոգեկան առողջության պահպանում՝ հոգեկան առողջության ամրապնդում, հոգեկան խանգարումների կանխարգելում, հոգեկան խանգարում ունեցող անձանց բուժում եւ վերականգնում, հոգեկան լիակատար բարեկեցության վիճակի ապահովում.

3) հոգեկան խանգարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված հիվանդությունների դասակարգչով նախատեսված, հոգեկան եւ վարքային խանգարումների դասին համապատասխանող խանգարումներ.

- 4) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ՝ անձ ում մոտ սույն օրենքով սահմանված կարգով ախտորոշված է հոգեկան խանգարում.
- 5) հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ հոգեբուժական բժշկական օգնության եւ սպասարկման կազմակերպում՝ սույն օրենքով նախատեսված հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում,
- 6) հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման,
- 7) արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպման պայման,
- 8) հոգեբուժական կազմակերպություն՝ համապատասխան տեսակի բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքի հիմնարկ, որը տրամադրում է հոգեբուժական օգնություն եւ սպասարկում հիվանդանոցային եւ (կամ) արտահիվանդանոցային ձեռով.
- 9) ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կազմում գործող բաժանմունք, որի հիմնական խնդիրն է հոգեբուժական օգնության եւ սպասարկման՝ հիվանդանոցային պայմաններում իրականացումը.
- 10) հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունք՝ հոգեբուժական կազմակերպության կազմում գործող բաժանմունք, որտեղ դատարանի որոշմամբ հարկադիր բուժման նպատակով գտնվում է այն անձը, որը հոգեկան վիճակով վտանգավոր է իր կամ այլ անձանց համար եւ պահանջում է մշտական հսկողություն եւ բուժում.
- 11) բժիշկ-հոգեբույժ՝ բարձրագույն բժշկական կրթություն, որակավորում ու հոգեբուժության գծով հետբուհական մասնագիտացում ստացած, հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնող ֆիզիկական անձ.
- 12) ընտանեկան բժիշկ՝ բարձրագույն բժշկական կրթություն, որակավորում ստացած, վերջին 5 տարիների ընթացքում հոգեկան առողջության վերաբերյալ թեմաներով վերապատրաստում անցած առողջության առաջնային պահպանման օղակում բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող ֆիզիկական անձ.
- 13) հոգեբան՝ բարձրագույն հոգեբանության կրթություն ստացած, հոգեբանական ծառայություններ իրականացնող ֆիզիկական անձ:
- 14) հոսպիտալացում՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոժարակամ կամ ոչ հոժարակամ կամ հարկադիր ձեւերով ընդունում հոգեբուժական կազմակերպություն՝ հիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելու նպատակով,
- 15) ոչ հոժարակամ բուժում՝ սույն օրենքով սահմանված հիմքերով առանց անձի համաձայնության վերջինիս հոգեբուժական կազմակերպություն տեղափոխելը եւ հոգեբուժական հիվանդանոցային բուժման ենթարկելը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով,
- 16) հարկադիր հսկողություն կամ բուժում՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշման հիման վրա առանց անձի համաձայնության վերջինիս հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային (ընդհանուր հսկողության հոգեբուժական կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում) բուժման ենթարկելը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:
- 17) հոգեբուժական հանձնաժողով՝ առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից, անհրաժեշտության դեպքում նաեւ այլ բժիշկ-մասնագետներից կազմված խումբ, որը ~~որոշումներ է կայացնում~~ ստեղծվում է հոգեբուժական կազմակերպության՝ գործադիր մարմնի իրավական ակտով, ~~իսկ~~ ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքում՝ յուրաքանչյուր դեպքի համար, եւ իրավասու է տալ անձի մոտ հոգեկան խանգարման առկայության կամ բացակայության, անձի՝ տվյալ հոգեվիճակում իր կամ հանրության համար վտանգ ներկայացնելու եւ դրանից

բխող բոլոր բժշկական հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն կամ պատճառաբանված որոշում:

Երկու բժիշկ-հոգեբույժներից կազմված հոգեբուժական հանձնաժողովի բժիշկ-հոգեբույժների իրարամերժ կարծիքի դեպքում գործադիր մարմնի իրավական ակտով հանձնաժողովում ներգրավվում է երրորդ բժիշկ-հոգեբույժը:

18) իրազեկման թերթիկ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից հաստատված ձեռի փաստաթուղթ, որում նշված են հոգեբուժական կազմակերպությունում հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող անձի իրավունքները, ազատությունները եւ դրանց սահմանափակումները,

19) երեխա՝ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված անձ,

20) ֆիզիկական զսպման միջոց՝ ֆիզիկական ուժի եւ (կամ) զսպման մեխանիկական միջոցների (գոտի, ամրակապ) կիրառումն է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին ~~պահելու տեղաշարժի~~ կամ շարժումների զսպման նպատակով,

21) մեկուսացման միջոց՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի տեղավորումն է առանձնացված սենյակում նրա տեղաշարժի ~~կամ շարժումների~~ սահմանափակման նպատակով,

22) հանդարտեցման մեթոդ՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին նրա կամքին հակառակ դեղերի տրամադրումն է անձի վարքագծի մեղմման (հանդարտեցում) նպատակով,

23) ֆիզիկական ուժ՝ ֆիզիկական զսպման միջոցի տեսակ, որն ուղղված է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զսպմանը կամ անշարժացմանը՝ համաչափ ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով (ձեռքերով հսկողություն):

24) պատշաճ ծանուցում՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին եւ նրա օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում) տեղեկատվության կամ փաստաթղթի առաքում՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ ստացականով ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ հաղորդագրության ձեակերպում ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ (նախապես նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով) կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ օրինական ներկայացուցչի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով),

25) իրազեկված համաձայնություն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կողմից տրված համաձայնությունը՝ իր համար հասկանալի լեզվով իրեն տրամադրված ամբողջական, օբյեկտիվ եւ հասանալի տեղեկատվության հիման վրա:

26) կոնտակտային անձ՝ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով սահմանված անձ:

27) հոգեբուժական վկայարկում՝ անձի մոտ հոգեկան խանգարման առկայությունը կամ բացակայությունը պարզելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման անհրաժեշտությունը գնահատելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման ձեւը որոշելուն ուղղված գործընթաց:

28) հոգեբուժական հետազոտում՝ անձի հոգեկան խանգարման ախտորոշումը ճշտելուն, ինչպես նաեւ հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով իրականացվող գործընթաց:

## ԳԼՈՒԽ 2

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 4. Հոգեկան առողջության պահպանումը

1. Հոգեկան առողջության պահպանումը ներառում է՝

1) հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը.

2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց անհրաժեշտ, բազմակողմանի եւ մատչելի հոգեբուժական բժշկական օգնության եւ սպասարկման տրամադրման, խնամքի ու օգնության այլ ձեւերի ապահովումը.

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գործընթացը իրականացվում է հոգեբուժական կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից՝ օրենքով սահմանված լիցենզիայի առկայության դեպքում:

3. Հոգեբուժական բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնելու կարգն ու պայմանները սահմանվում են սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով:

*Հոդված 5. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքները եւ հոգեբուժական կազմակերպության պարտականությունները*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ իրավունքները.

1) ինքնուրույն լինելու եւ հասարակության մեջ ներգրավվելու.

2) իր նկատմամբ բարեկիրթ, մարդասիրական եւ արժանապատվությունը չնվաստացնող վերաբերմունք ստանալու.

3) իրավունքների եւ օրինական շահերի վերաբերյալ իրազեկ լինելու եւ դրանց պաշտպանության միջոցների ընտրության.

4) հիվանդանոցային հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու ընթացքում բավարար սնունդ ստանալու իրավունք,

5) առողջության պահպանման, այդ թվում՝ շտապ եւ անհետաձգելի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու, ինչպես նաեւ սեփական միջոցների հաշվին ենթարկվելու բժշկական զննության եւ անհրաժեշտության դեպքում բուժման իր նախընտրած բժշկի կողմից.

6) փորձաքննվելու կամ վերափորձաքննվելու բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական իրավասու մարմինների կողմից.

7) ոչ հոժարական հոսպիտալացման նպատակով հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելու դեպքում անհապաղ այդ մասին անձամբ տեղեկացնելու իր կոնտակտային անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչին.

8) տալու իրազեկված համաձայնություն եւ ցանկացած փուլում հրաժարվելու գիտական կամ փորձարարական նպատակներով կիրառվող բուժական մեթոդներից եւ միջոցներից.

9) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում մայրենի կամ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալ իր առողջական վիճակի, իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակման դեպքերի վերաբերյալ.

10) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում կոչվելու իր անվամբ կամ ազգանվամբ.

11) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում պահանջել իր ընտրած բժիշկ-հոգեբույժի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին.

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության եւ ութամյա գիշերային քնի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններին.

13) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ, հաստատելու նամակագրական կապ.

14) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում օգտվելու հեռախոսակապից.

15) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հանդիպելու այցելուների հետ.

16) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում ունենալ եւ ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվել անձնական հագուստից.

17) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում ստանալ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն,

18) անձնական ընդունելության խնդրանքով դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, դրա գործունեության նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններին.

19) իր իրավունքների եւ ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, դատարան, մարդու իրավունքների պաշտպանին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին կամ միջազգային մարմիններին,

20) հոգեբուժական կազմակերպությունում ունենալ լիազոր մարմնի հաստատած պայմաններին համապատասխան կեցության պայմաններ.

21) օրենքով չսահմանափակված այլ իրավունքներ:

2. Հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է՝

1) հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել հոգեբուժական կազմակերպության ներքին կանոնակարգին եւ բուժման սխեմային,

2) սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված իրավունքի իրականացման անհնարինության դեպքում ոչ հոժարական հոսպիտալացման վերաբերյալ տեղեկացնել հոգեբուժական թյուն ընդունված անձի կոնտակտային անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչին՝ հնարավոր հասանելի եղանակով (հեռախոսային կապի, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով),

3) հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման կամ ենթադրյալ բռնությունների վերաբերյալ զանգատների դեպքերում այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին,

4) չխոչընդոտել սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված սեփական միջոցների հաշվին իր նախընտրած բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքի իրականացմանը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավունքն իրացնելու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի գիտական, բժշկական կամ այլ փորձերի հնարավոր հետեւանքների մասին: Գիտական, բժշկական կամ այլ փորձերի հնարավոր հետեւանքների տեղեկացման կարգը եւ ժամկետները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:

4. Հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի, բժիշկ-հոգեբույժի կողմից իրազեկվում են հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձի իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների մասին՝ սույն օրենքի հավելվածով սահմանված կարգով:

5. Հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրականացման ընթացակարգը սահմանվում է սույն օրենքի հավելվածով:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

7. Հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցության համար անհրաժեշտ պայմանները սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 6. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքների սահմանափակման դեպքերը եւ կարգը*

1. Սահմանափակման ենթակա սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 12-15-րդ (բացառությամբ գիշերային քնի իրավունքի) կետերով սահմանվող իրավունքները սահմանափակվում են մինչեւ իրավունքների սահմանափակման համար սույն հոդվածով սահմանված հիմքերի վերացումը՝ օրենքով սահմանված դեպքում կամ հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում (հոգեբուժական հանձնաժողովում ընդգրկված մասնագետների արձակուրդում գտնվելու, հիվանդության, ոչ աշխատանքային ժամի, հաստիքի թափուր լինելու դեպքերում) հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշմամբ, եթե այդ իրավունքների իրականացումը իրական վտանգ է ներկայացնում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ շրջապատի համար: Հոգեբուժական հանձնաժողովի կամ հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման, ինչպես նաեւ իրավունքների սահմանափակման պատճառների վերացման վերաբերյալ գրառում է կատարվում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավունքը կարող է իրականացվել միայն հոգեկան առողջության խնդիր ունեցող ~~սահմանափակման~~ այն անձի կողմից, ով սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ունի իրազեկված համաձայնություն տալու իրավունք: ~~Սահմանված կարգով անգործունակ չի ճանաչվել եւ ի վիճակի է գիտակցելու իր գործողությունների բնույթը եւ ղեկավարել դրանք:~~

3. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքի սահմանափակման վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելուց հետո բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը նույն օրը գրավոր իրազեկման թերթիկ հանձնելով տեղեկացնում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ պատշաճ ծանուցում է նաեւ օրինական ներկայացուցչին եւ նրանց հանձնում պատճառաբանված որոշման կրկնօրինակը, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

*Հոդված 7. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման կարգն ու պայմանները*

1. Հոգեբուժական հանձնաժողովի, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում (հոգեբուժական հանձնաժողովում ընդգրկված մասնագետների արձակուրդում գտնվելու, հիվանդության, ոչ աշխատանքային ժամի, հաստիքի թափուր լինելու դեպքերում) հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման հիման վրա հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ:

2. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները կիրառվում են իրեն կամ շրջապատին ֆիզիկական վնաս պատճառելու կամ դրա իրական սպառնալիքի դեպքում եւ եթե այդ սպառնալիքի վերացմանն ուղղված այլ միջոցների (բանավոր խոսքի, ներառյալ համոզելու միջոցով) կիրառումը բավարար չէ այն վերացնելու համար:

3. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները չեն կարող կիրառվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին ծարրուժանակի ենթարկելու, դիմադրությունը հաղթահարելուն անհամաչափ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելու կամ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելու սպառնալիքի կամ պատիվը կամ արժանապատվությունը նվաստացնելու ձեռով կամ պատժելու նպատակով:



4. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառումը կարող է զուգակցվել, եթե դրանց զուգակցման արդյունքում դրանց կիրառման տեւողությունը կկրճատվի կամ եթե դա անհրաժեշտ է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին կամ այլ անձանց սպառնացող վտանգը կանխելու համար:

5. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումներն են՝

1) հոգեշարժական գրգռվածություն,

2) գիտակցության խանգարմամբ ընթացող վիճակներ,

3) ծանր դիսֆորիա,

4) ագրեսիվ կամ աուտոագրեսիվ վարք,

5) ծանր դեպրեսիվ խանգարումներ՝ պացիենտի արտահայտված աժիտացիայով եւ (կամ) կայուն սուիցիդալ միտումներով,

6) կախյալության ծանր վիճակներ նարկոլոգիական ոլորտի հիվանդների մոտ, որոնք ընթանում են հոգեշարժական գրգռվածությամբ եւ (կամ) ագրեսիայով, եւ (կամ) աուտոագրեսիայով:

6. Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներն ընտրելիս բժիշկ-հոգեբույժը պարտավոր է հաշվի առնել դրանց կիրառման հակացուցումները:

7. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները չեն կարող կիրառվել այլ պացիենտների ներկայությամբ, բացառությամբ ֆիզիկական ուժի անհապաղ կիրառման անհրաժեշտություն առաջանալու դեպքերի, որոնք կարող են կիրառվել վարքագծի կտրուկ փոփոխության եւ ագրեսիվացման դեպքերում, այլ անձանց կյանքի կամ առողջություն պաշտպանության եւ վրա հասնելիք ծանր հետեւանքները կանխելու նպատակով):

8. Աշխատանքային օրերին եւ ժամերին ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման դեղորայքային մեթոդների կիրառման յուրաքանչյուր դեպքի մասին անմիջապես զեկուցվում է հոգեբուժական կազմակերպության բաժանմունքի վարիչին եւ հոգեբուժական կազմակերպության տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը:

9. Բժիշկ-հոգեբույժը՝

1) ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում նույն օրը դրանց կիրառումը հիմնավորող գրառում է կատարում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ինչպես նաեւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում,

2) երեխայի, ինչպես նաեւ անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է նրանց օրինական ներկայացուցչներին:

10. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանի ձեւը հաստատում է լիազոր մարմինը:

11. Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառման ամբողջ ժամանակահատվածում պացիենտը մշտապես գտնվում է բուժանձնակազմի հսկողության տակ:

12. Եթե ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը արդյունք չի տալիս, հոգեբուժական հանձնաժողովը, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը ընդունում է ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը շարունակելու մասին

որոշում եւ յուրաքանչյուր դեպքի մասին աշխատանքային օրերին եւ ժամերին զեկուցում է հոգեբուժական կազմակերպության բաժանմունքի վարիչին եւ հոգեբուժական կազմակերպության տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին եւ ժամերին կիրառելու դեպքում՝ զեկուցում է հաջորդ աշխատանքային օրը:

*Հոդված 8. Ֆիզիկական զսպման միջոցների կիրառման առանձնահատկությունները*

~~1. Ֆիզիկական զսպման միջոցով ֆիզիկական ուժի կամ զսպման մեխանիկական միջոցների կիրառմամբ զսպվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի տեղաշարժը կամ շարժումները:~~

2. 1. Եթե Ֆիզիկական զսպումը ~~իրականացվում է~~ մեխանիկական միջոցներով իրականացնելիս ~~ապա~~ կիրառվում են տարբեր նյութերից պատրաստված ոչ տրավմատիկ, հարմարավետ օգտագործմամբ ամրակապեր, գոտիներ, հատուկ հագուստներ:

3. 2. Ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցները պետք է լինեն հեշտությամբ արձակվող եւ չպետք է ցավ պատճառեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին:

4. 3. Եթե ֆիզիկական զսպումն իրականացվում է ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով, ապա դա պետք է իրականացվի այնպիսի ձեւով, որպեսզի չտոնահարվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արժանապատվությունը եւ նվազագույնի հասցվեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին վնասելու կամ ցավ պատճառելու ռիսկերը:

5. 4. 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում ֆիզիկական զսպման կիրառման ընդհանուր տեւողությունը չպետք է գերազանցի՝

- 1) 18 տարեկանից բարձր անձանց համար՝ 4 ժամը,
- 2) 9-17 տարեկան անձանց համար՝ 2 ժամը:

6. 5. Մինչեւ 9 տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցներ:

7. 6. Ֆիզիկական զսպումն իրականացվում է միջին եւ կրտսեր բուժանձնակազմի կողմից՝ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի հսկողությամբ:

8. 7. Ոչ ուշ, քան 30 րոպե պարբերականությամբ բժիշկ-հոգեբույժը զննում է հոգեկան առողջության խնդիր ունեցող ֆիզիկական զսպման ենթարկված անձին, որի ընթացքում ստուգվում է կապերի ամրությունը, վերջույթների արտաքին տեսքը (գունավորում, հնարավոր այտուցվածություն), վերջույթների ջերմությունը, կապիչից ստորեւ գտնվող վերջույթների անոթների պոլսացիան, կապիչի տեղադրման հատվածում ցավի զգացողությունը, կապիչից ստորեւ վերջույթների զգայունությունը եւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

9. 8. Սույն հոդվածի ~~8-րդ~~ 7-րդ մասով սահմանված պարբերականությամբ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զննության արդյունքում բժիշկ-հոգեբույժը պարզում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը շարունակելու անհրաժեշտության հարցը: Ֆիզիկական զսպման միջոցների կիրառման պատճառների վերացման դեպքում հոգեբուժական հանձնաժողովը, իսկ տվյալ պահին դրա ստեղծման անհնարինության դեպքում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը որոշվում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը դադարեցնել:

*Հոդված 9. Հանդարտեցման մեթոդների կիրառման առանձնահատկությունները*

1. Հանդարտեցման նպատակով տրամադրվում են լիազոր մարմնի կողմից հաստատած ցանկով սահմանված դեղերը:

2. Եթե պերորալ դեղերի ընդունումն անհնարին է կամ անհրաժեշտ է սեղատիվ էֆեկտի արագ ստացում, կիրառվում է պարենտերալ ճանապարհը (միջմկանային կամ ներերակային):

3. Հանդարտեցնող դեղերի կողմնակի ազդեցությունները կառավարելու նպատակով կարող են կիրառվել կորեկտորներ հանդիսացող դեղեր, ինչպես նաև հնարավոր սոմատիկ խնդիրների դեպքում՝

սոմատիկ վիճակը կարգավորող դեղեր՝ ըստ բժշկական ցուցումների:

4. Դեղորայքային հանդարտեցման միջոցներ կիրառող բժիշկը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ ժամ պարբերականությամբ զննել հոգեկան առողջության խնդիր ունեացող անձին (անոթազարկը, շնչառության արագությունը, մարմնի ջերմաստիճանը, հիդրատացիայի աստիճանը եւ գիտակցության մակարդակը) եւ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարել համապատասխան գրառում:

5. Հանդարտեցման մեթոդի կիրառման արդյունքում անհրաժեշտ հանգստացնող (սեդատիվ) արդյունքի հասնելուց անմիջապես հետո ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները պետք է անհապաղ դադարեցվեն, եթե այդպիսիք կիրառվել են:

*Հոդված 10. Մեկուսացման միջոցների կիրառման առանձնահատկությունները*

1. Մեկուսացման միջոցների կիրառումն իրականացվում է այդ նպատակով առանձնացված, հատուկ կահավորում ունեցող սենյակում:

2. Մեկուսացման միջոցների կիրառման դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը պետք է գտնվի մշտական հսկողության ներքո: Սույն դեպքում համապատասխան բուժաշխատողը պետք է գտնվի մեկուսացման սենյակից դուրս կամ մեկուսացման սենյակի հետ ընդհանուր պատուհանով միացված հարեան սենյակում այնպես, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը հնարավորություն ունենա ամբողջությամբ տեսնել բուժաշխատողին, իսկ բուժաշխատողը հնարավորության ունենա հսկելու եւ լսելու հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Տեսանկարահանման միջոցները չեն կարող փոխարինել անձնակազմի մշտական ներկայությանը:

3. Մեկուսացման միջոցները 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում կիրառվում են 18 տարեկանից բարձր անձանց համար առավելագույնը 4 ժամ տեւողությամբ, իսկ 9-17 տարեկան անձանց համար՝ առավելագույնը 2 ժամ տեւողությամբ:

4. Մինչեւ 9 տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել մեկուսացման միջոցներ:

*Հոդված 11. Պետության կողմից տրամադրվող երաշխիքները հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնելիս եւ հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացումը վճարովի հիմունքներով*

1. Պետությունը երաշխավորում է պետության միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը՝ մարդասիրության ու մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ դեպքերում պետությունը յուրաքանչյուր հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար երաշխավորում է՝

1) բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում անհետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը, ինչպես նաև հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը.

2) բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակներում հոգեբուժական փորձաքննության բոլոր ձեւերի իրականացումը, ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության իրականացումը.

3) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալ-կենցաղային վիճակին օժանդակությունը.

4) խնամակալությունը.

5) իրավական հարցերով օժանդակությունը հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ժամանակահատվածում.

6) հոգեկան առողջության խնդիր ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցումը եւ խնամքը.

7) արտակարգ իրավիճակների ժամանակ հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպումը.

8) Կառավարության սահմանած կարգին համապատասխան դեղերի անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրումը:

3. Իրավաբանական անվճար օգնությունը տրամադրվում է հոգեբուժական կազմակերպությունում բժշկական օգնություն եւ սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի նշանակած փաստաբանի կողմից:

4. Հոգեբուժական կազմակերպությունները պետության կողմից երաշխավորված անվճար հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացնում են լիազոր մարմնի հետ կնքած պայմանագրով նախատեսված հոգեբուժական բժշկական եւ հարբժշկական օգնության եւ սպասարկման տեսակների եւ ծավալների շրջանակներում:

5. Լիազոր մարմնի հետ կնքած պայմանագրում չընդգրկված հոգեբուժական բժշկական եւ հարբժշկական օգնության եւ սպասարկման տեսակները եւ ծավալները իրականացվում են վճարովի հիմունքներով: Հոգեբուժական օգնության եւ սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

6. Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց անհետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը տրամադրվում է անվճար հիմունքներով: ~~վճարովի հիմունքներով, բացառությամբ օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերի:~~

7. Բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրերի շրջանակում պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով հոգեբուժական օգնության եւ սպասարկման կազմակերպումն ու իրականացումը նկարագրող եւ կանոնակարգող չափորոշիչը հաստատում է լիազոր մարմինը:

8. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ եւ 6-րդ կետերով սահմանված միջոցառումներն իրականացնում է աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության բնագավառի պետական կառավարման մարմինը:

*Հոդված 12. Կառավարության լիազորությունները հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման եւ սոցիալական պաշտպանության ոլորտում*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը, սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով Կառավարությունը՝

1) ստեղծում է հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մեծահասակների եւ երեխաների համար,

2) ապահովում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հանրակրթական եւ մասնագիտական ուսուցում.

3) ստեղծում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց բուժական-արտադրական ուղղվածության կազմակերպություններ՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային թերապիայի, նոր մասնագիտությունների տիրապետման եւ զբաղվածության ապահովման համար, միջոցներ է ձեռնարկում աշխատանքի հարմարեցված պայմաններով աշխատատեղեր կամ հատուկ արտադրամասեր ստեղծելու ուղղությամբ.

4) ստեղծում է կացարաններ սոցիալական կապերը կորցրած հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար:

5) սահմանում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները եւ դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները եւ դրանց շահագործման ժամկետները:

### ԳԼՈՒԽ 3

#### ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՁԻ ՄՈՏ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ ԱԽՏՈՐՈՇԵԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*Հոդված 13. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողները*

1. Հոգեբուժական օգնությունն ու սպասարկումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում են բժիշկ-հոգեբույժները եւ ընտանեկան բժիշկները՝ մասնագիտական անհրաժեշտության դեպքում համագործակցելով հոգեբանի, ինչպես նաեւ այլ բժիշկ-մասնագետների հետ:

2. Ընտանեկան բժշկի կողմից տրամադրվող հոգեբուժական օգնության եւ սպասարկման ծավալը եւ կարգը սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 14. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների անկախությունը*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնելիս հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողները անկախ են իրենց կայացրած մասնագիտական որոշումներում եւ ղեկավարվում են մարդասիրության, բժշկական էթիկայի, պացիենտի լավագույն շահերով առաջնորդվելու սկզբունքներով:

2. Բժիշկ-հոգեբույժը, ում կարծիքը չի համընկնում հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հետ, իրավունք ունի կազմել սեփական եզրակացությունը, որը պարտադիր կցվում է հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությանը եւ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթին:

*Հոդված 15. Անձի մոտ հոգեկան խանգարում ախտորոշելուն ներկայացվող պահանջը*

1. Անձի մոտ հոգեկան խանգարում կարող է ախտորոշվել միայն բժիշկ-հոգեբույժի կողմից:

2. Անձի հոգեկան առողջության վերաբերյալ այլ բժիշկ-մասնագետի (ոչ բժիշկ-հոգեբույժի) եզրակացությունը հիմք չէ անձի մոտ հոգեկան խանգարում ախտորոշելու համար:

### ԳԼՈՒԽ 4

#### ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

*Հոդված 16. Անձի հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկություններ փոխանցելուն ներկայացվող պահանջները*

1. Անձի՝ բժիշկ-հոգեբույժին կամ հոգեբուժական կազմակերպություն դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման եւ բուժման ընթացքում պարզված տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչին՝ նրանց պահանջով: Բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները առանց անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում առանց օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել այլ անձանց կամ մարմիններին՝ միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

2. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով փոխանցվել միայն՝

1) բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող այլ անձանց կամ կազմակերպություններին (հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կյանքին սպառնացող վիճակի կամ շրջապատի համար վտանգ

ներկայացնող հիվանդության կամ դրա կասկածի դեպքում կամ եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն իր հոգեկան վիճակով ունակ չէ հասկանալու եւ համաձայնություն տալու անձնական տվյալների փոխանցմանը եւ չունի օրինական ներկայացուցիչ) ախտորոշման կամ հետազոտման կամ բուժման նպատակով, եթե առկա է մասնագիտական անհրաժեշտություն, այն է՝ առանց այդ տեղեկությունների հնարավոր չէ իրականացնել անձի պատշաճ ախտորոշումը կամ հետազոտումը կամ բուժումը,

2) լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի եւ որակի ստուգման աշխատանքներ իրականացնելիս,

3) հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին), քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս,

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական եւ պրոբացիայի ծառայություններին՝ օրենքով նախատեսված դեպքերում,

5) զինվորական կոմիսարիատների եւ այլ ռազմաբժշկական հանձնաժողովների հարցման դեպքում՝ ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու նպատակով,

6) առողջապահության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հարցման դեպքում՝ առողջապահության, սանիտարահամաճարակային անվտանգության, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքի անվտանգության ապահովման եւ աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս,

7) Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ վարորդական իրավունք տրամադրելու (փոխանակելու), գեների շրջանառությունը վերահսկելու, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակներով,

7) 8) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Հոգեբուժական կազմակերպություններում բժշկական գաղտնիք համարվող տվյալները պահպանվում են Կառավարության կողմից սահմանված պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով սահմանված առողջապահության ոլորտի փաստաթղթերի պահպանության համար սահմանված ժամկետներով:

4. Բժշկական գաղտնիք համարվող տվյալներ մշակողները պարտավոր են պահպանել իրենց աշխատանքային կամ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

#### ԳԼՈՒԽ 5

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ

*Հոդված 17. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելուն ներկայացվող ընդհանուր պահանջները եւ հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալու համաձայնությունը*

1. Հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր

իրազեկված համաձայնության (դիմում) դեպքում՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տրվում է նրանց կողմից, եթե՝

1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով 16 տարին լրացած երեխան կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձն ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետեւանքները,

2) այդ տեղեկությունները չեն վնասի 16 տարին լրացած երեխային կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին,

3) կոյուրացնեն նրանց հոգեբուժական օգնության եւ սպասարկման տրամադրումը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում 16 տարին լրացած երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել հոգեբուժական միջամտություն:

4. 16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Երեխայի, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է:

6. Հոգեբուժական բժշկական օգնություն եւ սպասարկման շրջանակում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը պարտավոր է անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում նաեւ օրինական ներկայացուցչին՝

1) ներկայանալ որպես բժիշկ-հոգեբույժ,

2) տրամադրել տեղեկություններ հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տեսողության, ինչպես նաեւ կողմնակի ազդեցության եւ ակնկալվող արդյունքների, հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու ու հրաժարվելու հետեւանքների մասին եւ դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթում կատարել համապատասխան գրառումներ եւ հաստատել դրանք ստորագրությամբ լիազոր մարմնի սահմանված կարգով:

7. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալու համար դիմած անձն, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչին իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվել հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալուց կամ պահանջել դադարեցնել այն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում նաեւ օրինական ներկայացուցչին բժիշկ-հոգեբույժի կողմից պետք է պարզաբանվի հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու հնարավոր հետեւանքները:

8. Հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու փաստը բժիշկ-հոգեբույժի կողմից գրառվում է անձի բժշկական փաստաթղթում եւ հաստատվում բժիշկ-հոգեբույժի եւ հրաժարվող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի ստորագրությամբ:

9. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում տրամադրելու վերաբերյալ տվյալները բժիշկ-հոգեբույժի կողմից գրառվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում եւ հաստատվում բժիշկ-հոգեբույժի ստորագրությամբ:

10. Բժշկական փաստաթղթի ձեւերը, դրանց լրացման կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 18. Հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման ձեւերը եւ դրանց բովանդակությունը*

1. Հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը իրականացվում է արտահիվանդանոցային եւ հիվանդանոցային ձեւերով:

2. Արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը ներառում է.

- 1) հոգեբուժական վկայարկումը.
- 2) հետազոտումը՝ ախտորոշման նպատակով,
- 3) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառումը.
- 4) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խորհրդատվական բժշկական օգնության տրամադրումը.
- 5) հաշվառման մեջ գտնվող՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց արտահիվանդանոցային շարունակական բուժումը եւ հսկողությունը.
- 6) արտահիվանդանոցային փորձաքննությունը.
- 7) հարկադիր բուժումը եւ հսկողությունը՝ դատարանի որոշման հիման վրա:
- 8) առողջ ապրելակերպի մասին քարոզչությունը,
- 9) բժշկական ցուցումների համաձայն ուղեգրում հիվանդանոցային պայմաններում հետազոտման, բուժման կամ մասնագիտական խնամքի նպատակով:

3. Հիվանդանոցային հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը ներառում է՝

- 1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց ընդունումը.
- 2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հետազոտումը,
- 3) հիվանդանոցային բուժումը.
- 4) հիվանդանոցային փորձաքննությունը.
- 5) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց դուրսգրումը.
- 6) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հիվանդանոցային մասնագիտացված խնամքը.
- 7) ոչ հոժարակամ հոսպիտալացումը կամ հարկադիր բուժումը՝ դատարանի որոշման հիման վրա:

4. Արտահիվանդանոցային եւ հիվանդանոցային հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

5. Զինձառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրը հաստատելու մասին» օրենքով:

#### Հոդված 19. Հոգեբուժական վկայարկումը

~~1. Հոգեբուժական վկայարկումն անձի մոտ հոգեկան խանգարման առկայությունը կամ բացակայությունը պարզելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման անհրաժեշտությունը գնահատելու կամ հոգեբուժական օգնության եւ սպասարկման ձեւը որոշելուն ուղղված գործընթաց է:~~

1. 2. Հոգեբուժական վկայարկումն իրականացվում է անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի իրազեկված համաձայնությամբ:

2. 3. Հոգեբուժական վկայարկումն իրականացվում է առանց անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ առանց օրինական ներկայացուցչի համաձայնության, այն դեպքերում, երբ անձի գործողությունները հիմք են տալիս ենթադրելու, որ անձը ունի հոգեկան խանգարում, որի հետեւանքով նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար.



~~3-4.~~ Հոգեբուժական վկայարկման արդյունքում, եթե բժիշկ-հոգեբույժի կողմից հաստատվում է, որ անձը իր ներկա հոգեկան վիճակով պայմանավորված վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, ապա անձը հոսպիտալացվում է հոժարակամ կամ սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:

*Հոդված 20. Հոգեբուժական հետազոտումը եւ բուժումը*

~~1. Հոգեբուժական հետազոտումը իրականացվում է անձի հոգեկան խանգարման ախտորոշումը ճշտելու, ինչպես նաեւ հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով՝ Հոգեբուժական հետազոտումն իրականացվում է անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:~~

2. Հոգեբուժական հետազոտման (ներառյալ ախտորոշումը) կամ բուժման իրականացումը չի կարող պայմանավորվել հասարակության կողմից ընդունված բարոյական կամ մշակութային կամ քաղաքական կամ կրոնական արժեքների հետ անձի անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների հետ:

3. Հոգեբուժական հետազոտման (ներառյալ ախտորոշման) եւ բուժման մեթոդները, կիրառվող դեղերը, բժշկական նշանակության ապրանքները կարող են օգտագործվել բացառապես ախտորոշիչ եւ բուժական նպատակներով հոգեկան խանգարման բնույթին եւ դրա բուժման համար անհրաժեշտ միջոցներին համապատասխան եւ որեւէ դեպքում չեն կարող կիրառվել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պատժելու նպատակով կամ այլ անձանց կողմից հետապնդվող այլ նպատակներով:

*Հոդված 21. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հաշվառումը*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք հոգեբուժական կազմակերպությունների կողմից ենթակա են հաշվառման:

2. Անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու հիմք է հանդիսանում նրա մոտ առաջին անգամ ախտորոշված հոգեկան խանգարման առկայությունը:

3. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառումից հանելու հիմք են հանդիսանում՝

1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մահը.

2) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն դադարեցնելը՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն,

3) հոգեբուժական հանձնաժողովի կողմից գրավոր տրված «ներկայում հոգեպես առողջ է» եզրակացությունը:

4. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հոգեբուժական կազմակերպությունում հաշվառելու եւ հաշվառումից հանելու կարգը հաստատում է լիազոր մարմինը:

*Հոդված 22. Հոժարակամ հոսպիտալացման հիմքերը*

1. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացման հիմք են հանդիսանում անձի հոգեկան խանգարման առկայությունը եւ բժիշկ-հոգեբույժի՝ անձի հիվանդանոցային ձեռք հետազոտության կամ բուժման անհրաժեշտության մասին եզրակացությունը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը: Փորձաքննության իրականացման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

2. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարակամ հոսպիտալացումը կարող է իրականացվել միայն անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի կամ գրավոր իրազեկված համաձայնության հիման վրա: Անգործունակ ճանաչված անձին սույն հոդվածին համապատասխան ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոսպիտալացնելուց հետո

խնամակալը այդ մասին «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:

3. Առանց անձը հաստատող փաստաթղթի անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում բժիշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը գրավոր տեղեկացնում են իրավապահ մարմիններին հոսպիտալացման փաստի վերաբերյալ:

4. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի օտարերկրացի լինելու դեպքում ~~հոգեբուժական-հոգեկան առողջության~~ կազմակերպության գործադիր տնօրենը նույն օրը, իսկ ոչ ախտանշային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը միաժամանակ գրավոր տեղեկացնում է նաեւ լիազոր մարմնին, որն էլ իր հերթին այդ մասին հայտնում է արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման մարմնին:

*Հոդված 23. Հոժարական հոսպիտալացված անձի դուրսգրումը*

1. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հոժարական հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դուրսգրումը իրականացվում է՝

1) անձի ցանկությամբ կամ,

2) անձի առողջացման եւ հոգեկան վիճակի բավարար լինելու դեպքում, եթե վերացել է հետագա հիվանդանոցային ձեռով բուժման անհրաժեշտությունը՝ բժիշկ-հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ,

3) հետազոտման կամ փորձաքննության ժամկետները ավարտվելու դեպքում:

2. Դուրսգրումից առաջ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը պատշաճ ծանուցում է անգործունակ ճանաչված անձի կամ երեխայի օրինական ներկայացուցչին՝ ծանուցման մեջ նշելով դուրսգրման օրը, ամիսը տարին եւ ժամը:

3. Ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարական հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը, իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվել հոգեբուժական օգնություն եւ սպասարկում ստանալուց կամ պահանջել դադարեցնել այն:

*Հոդված 24. Ոչ հոժարական հոսպիտալացման հիմքը եւ կարգը*

1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն առանց իր, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական վկայարկման արդյունքում կարող է ոչ հոժարական հոսպիտալացվել՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով, եթե՝ առանց հոսպիտալացման անձի բուժումն արդյունավետ չի կարող կազմակերպվել եւ հոգեբուժական օգնության ուշացումը կարող է վտանգ ներկայացնել անձի կյանքին, առողջությանը կամ շրջապատին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում հոսպիտալացվելուց հետո 72 ժամվա ընթացքում՝

1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը պարտադիր հետազոտվում է հոգեբուժական հանձնաժողովի կողմից եւ

2) ոչ հոժարական հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում, հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու համար: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչեւ դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը՝ հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում է միայն շտապ եւ անհետաձգելի հոգեբուժական օգնություն եւ սպասարկում:

3. Հիվանդանոցային ոչ հոժարական բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը ամիսը առնվազն մեկ անգամ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին՝ անձի նկատմամբ ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննում է և տալիս է եզրակացություն ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու մասին:

4. Ոչ հոժարական բուժումը կարող է տևել ոչ ավել, քան վեց ամիս: Եթե վեց ամիսը լրանալու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ չեն վերացել ոչ հոժարական բուժման սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը, ապա վեցամսյա ժամկետը լրանալուց հետո 72 ժամվա ընթացքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է ներկայացնում դատարան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու պահանջով: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչև դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում է միայն շտապ եւ անհետաձգելի հոգեբուժական օգնություն եւ սպասարկում:

5. Մինչև սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ ոչ հոժարական բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով:

*Հոդված 25. Դատահոգեբուժական փորձաքննության տեսակները եւ դրա իրականացման առանձնահատկությունները*

1. Դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել ինչպես հիվանդանոցային պայմաններում (հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն), այնպես էլ արտահիվանդանոցային պայմաններում (արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն):

2. Դատահոգեբուժական փորձաքննությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված դեպքերում եւ կարգով՝ համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման հիման վրա:

3. Դատահոգեբուժական փորձաքննությունը կարող է իրականացվել միայն բժիշկ-հոգեբույժներից, իսկ փորձաքննություն նշանակելու որոշման մեջ նախատեսված լինելու դեպքում՝ նաեւ այլ բժիշկ-մասնագետներից կազմված փորձագետների հանձնաժողովի կողմից: Փորձագետների հանձնաժողովի եզրակացությունը հաստատվում է դրա անդամների ստորագրությամբ:

4. Դատահոգեբուժական փորձաքննություն իրականացնող (փորձագետների) հանձնաժողովը պետք է բաղկացած լինի առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից: Առավել բարդ դեպքերում

5. Հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է մինչև 45-օրյա ժամկետում, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է 25-օրյա ժամկետում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված հացագործությունների մասին հաղորդումների քննարկման փուլում նշանակված փորձաքննությունների, որոնց դեպքում հիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է մինչև 24-օրյա ժամկետում, իսկ արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննությունն իրականացվում է 15-օրյա ժամկետում:

6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության կարգով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության իրականացմանը փորձաքննության ենթարկվող անձի ներկայանալն ապահովում է փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող մարմինը, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական եւ վարչական դատավարության կարգով նշանակված դատահոգեբուժական փորձաքննության իրականացմանը՝ համապատասխան դատավարության կողմը:

7. Դատահոգեբուժական փորձաքննության համար ներկայացված անձը չի ենթարկվում փորձաքննության՝ անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում, կամ երբ հնարավոր չէ ներկայացված փաստաթղթերի հիման վրա հավաստիանալ, որ փորձաքննությանը ներկայացված անձը այն անձն է, ով նշված է փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ:

8. Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը տրվում է փորձաքննության ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ժամկետում:

9. Եթե դատահոգեբուժական փորձաքննության իրականացման արդյունքում փորձագետները հանգել են միասնական կարծիքի, ապա կազմվում է մեկ միասնական եզրակացություն, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Դատահոգեբուժական փորձաքննության արդյունքների վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու դեպքում, նման կարծիք ունեցող փորձագետի կողմից կազմվում է առանձին եզրակացություն, որը հաստատվում է տվյալ փորձագետի ստորագրությամբ:

10. Դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև հատուկ կարծիք պարունակող եզրակացությունը կազմվում է երեք օրինակից, որից մեկը տրվում է դատահոգեբուժական փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձին (մարմին), մյուս օրինակը կցվում է փորձաքննության ենթարկված անձի բժշկական փաստաթղթերին, երրորդ օրինակը տրամադրվում է դատահոգեբուժական փորձաքննության ենթարկված անձին:

*Հոդված 26. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հարկադիր հսկողությունը կամ բուժումը*

1. Անձին հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային բուժման ընդունելու համար հիմք է տվյալ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը: Անձի հարկադիր արտահիվանդանոցային հսկողությունը կամ բուժմանը կամ հիվանդանոցային (ընդհանուր հսկողության հոգեբուժական կամ հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում) բուժմանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

2. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության կամ բուժման կամ հիվանդանոցային բուժման ընդունվելիս հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը սույն օրենքով սահմանված կարգով տեղեկացվում է իր իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, հարկադիր հսկողություն կամ բուժում ստանալու նպատակի եւ պատճառների մասին:

3. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողության եւ բուժման նպատակով հոգեբուժական կազմակերպություն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի այցերի հաճախականությունը սահմանվում է բժիշկ-հոգեբույժի կողմից՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակին համապատասխան, ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ:

4. Հարկադիր արտահիվանդանոցային հսկողություն կամ բուժում կամ հիվանդանոցային բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը առնվազն վեց ամիսը մեկ անգամ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին՝ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում քննում եւ տալիս է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը շարունակելու կամ փոխելու կամ դադարեցնելու մասին եզրակացություն:

5. Հոգեբուժական հանձնաժողովի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին եզրակացություն տալու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը տասն աշխատանքային օրվա ընթացքում, կցելով հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը, միջնորդություն է ներկայացնում դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները փոխելու կամ դադարեցնելու մասին:

6. Հարկադրանքի միջոցը փոխելու կամ դադարեցնելու դեպքում տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը 2-օրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է անձի բնակության վայրի Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային բաժին:

7. Սույն օրենքով սահմանված դրույթները այնքանով, որքանով կիրառելի են, տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 459-րդ հոդվածով սահմանված որպես անվտանգության միջոց անձին հոգեբուժական կազմակերպությունում տեղավորելու դեպքերի վրա:

#### ԳԼՈՒԽ 6

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Հոդված 27. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների բողոքարկումը եւ պատասխանատվությունը սույն օրենքի պահանջների խախտման համար*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունները (անգործությունը), որոշումները, մասնագիտական եզրակացությունները կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
2. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

#### ԳԼՈՒԽ 7

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ) ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

*Հոդված 28. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը*

1. Հոգեբուժական օգնության եւ սպասարկման իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

*Հոդված 29. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկումը*

1. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով:
2. Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը: Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է:
3. Հոգեբուժական օգնություն եւ սպասարկում իրականացնողների գործողությունների (ներառյալ անգործության) նկատմամբ հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի անհատական կազմը եւ իրավասությունը սահմանում է լիազոր մարմինը:

*Հոդված 30. Հասարակական մշտադիտարկման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին տեղեկատվություն տրամադրելը*

1. Հասարակական դիտորդների խումբը պարտավոր է մշտադիտարկումների արդյունքում արձանագրված թերությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

«Հոգեբուժական օգնության եւ սպասարկման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը կարգավորում է հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԵՎ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2. Հոգեբուժական կազմակերպություն իր տարածքում տեղադրում է առնվազն մեկ տաքսոֆոն (հեռախոս) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցության սակագները՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

3. Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավունք ունի յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարելու առնվազն երեք անվճար հեռախոսազանգ Հայաստանի Հանրապետության տարածքում, ընդ որում առաջին հեռախոսազանգի իրավունքը ապահովվում է հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելուց անմիջապես հետո:

4. Հոգեբուժական կազմակերպություն իր տարածքում տեղադրում է առնվազն մեկ փոստարկղ՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

5. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը եւ դրա գաղտնիությունը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի համար: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմն ապահովում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի գրած նամակների փոխանցումը փոստային ծառայությանը եւ փոստային առաքման անդորրագրի, ինչպես նաեւ փոստով ստացված, չբացված նամակների հանձնումը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի ուղարկած եւ ստացած նամակները չեն կարող ենթարկվել գրաքննության հոգեբուժական կազմակերպության կողմից:

3. ԱՅՅԵԼՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄԸ

6. Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, այցելուների հետ ազատ հանդիպելու պայմաններ է ստեղծում՝ չխախտելով տվյալ հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից հաստատած ներհիվանդանոցային ռեժիմը:

7. Երեխայի՝ ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց, այցելուների հանդիպման ժամանակ բժշկական համապատասխան ցուցումների դեպքում բժիշկ-հոգեբույժի հանձնարարությամբ ուղեկցում է տվյալ բաժանմունքի բուժքույրը, որի վերաբերյալ գրառում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

8. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք իրավունք ունեն՝

1) անձամբ, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի միջոցով, հոգեբուժական կազմակերպություն տեղափոխել լիազոր մարմնի կողմից սահմանված ցանկին համապատասխան առաջին անհրաժեշտության իրեր եւ պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, կամ

2) իրենց միջոցների հաշվին ձեռք բերել (այդ թվում՝ էլեկտրոնային հեռահաղորդակցության միջոցներով) առաջին անհրաժեշտության իրեր եւ պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, ընդ որում՝

ա. գործունակ լինելու դեպքում անձամբ, եթե տվյալ հոգեբուժական կազմակերպության տարածքում առկա է առեստի օբյեկտ,

բ. անգործունակ ճանաչված լինելու դեպքում իրենց օրինական ներկայացուցիչների կամ համապատասխան աշխատակցի միջոցով:

#### 4. ԹԵՐԹԵՐՈՎ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

9. Յուրաքանչյուր հոգեբուժական կազմակերպությունում պետք է առկա լինի թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրություն իրականացնող կազմակերպության բաժանորդագրության անվանացանկ, որը պետք է հասանելի լինի հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց:

10. Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը պարտավոր է ապահովել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կողմից թերթերի բաժանորդագրությունը եւ բաժանորդագրված թերթերի եւ ամսագրերի հանձնումը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին:

5. ԱՆՁՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԻՆՊԵՍ ՆԱԵՎ ԲՈՒԺՄԱՆ, ՀԵՏԱՁՈՏՄԱՆ, ԴՈՒՐՍԳՐՄԱՆ, ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻՆ ԿԱՄ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԱՐԻՉԻՆ ԴԻՄԵԼԸ, ԻՐ ԸՆՏՐԱԾ ԲԺԻՇԿ-ՀՈԳԵԲՈՒԺԻՑԻ՝ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

11. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի գրավոր կամ բանավոր կարգով անձնական ընդունելության համար դիմել հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին, ով պարտավոր է դիմումը ստանալու նույն օրը, իսկ դրա անհնարինության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հետ անձնական հանդիպումը (ընդունելություն):

12. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի իր բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով գրավոր կամ բանավոր դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին կամ բաժանմունքի վարիչին:

13. Հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը կամ բաժանմունքի վարիչը, ստանալով դիմումը կամ բանավոր հարցումը եւ այդ մասին նշում կատարելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ոչ ավելի քան 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան տեղեկատվությունը տրամադրում են դիմումատուին եւ ձեռնամուխ լինում համապատասխան հարցերի կարգավորմանը:

14. Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն իրավունք ունի գրավոր կամ բանավոր դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնին՝ պահանջելով սեփական միջոցների հաշվին ապահովել իր ընտրած բժշկ-հոգեբույժի մասնակցությունը հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին, բժշկական զննման եւ (կամ) բուժման ընթացքին:

15. Դիմումը կամ բանավոր հաղորդագրությունը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դիմումում նշված բժշկ-հոգեբույժին եւ բժշկ-հոգեբույժի համաձայնությունը ձեռք բերելով՝ տվյալ բժշկ-հոգեբույժը մասնակցում է հանձնաժողովային բժշկական զննման եւ (կամ) բուժման ընթացքին: Դիմումում նշված բժշկ-հոգեբույժի հրաժարվելը չի սահմանափակում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի՝ այլ բժշկ-հոգեբույժ ընտրելու իրավունքը:

6. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՏՆՎՈՂ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

16. Հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաեւ օրինական ներկայացուցիչը բժշկ-հոգեբույժի կողմից ընդունման օրվանից մեկ օրացուցային օրվա ընթացքում իրազեկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների, ինչպես նաեւ հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տեսողության, ինչպես նաեւ կողմնակի ազդեցության եւ ակնկալվող արդյունքների, հոգեբուժական օգնությունից եւ սպասարկումից հրաժարվելու հետեւանքների վերաբերյալ՝ այդ մասին համապատասխան նշում կատարելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում:

17. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան իրազեկելու փաստը հաստատվում է սույն օրենքով նախատեսված իրազեկման թերթիկ հանձնելով: Իրազեկման թերթիկը կազմվում է 2 օրինակից, որոնք ստորագրվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի եւ իրազեկման համար պատասխանատուի կողմից: Իրազեկման թերթիկի մեկ օրինակը հանձնվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում պատշաճ ծանուցմամբ՝ նաեւ օրինական ներկայացուցչին, իսկ մյուս օրինակը կցվում է բժշկական փաստաթղթին:

18. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի օտարերկրացի լինելու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր տնօրենը նույն օրը, իսկ ոչ ախտաանքային օրերին եւ ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը միաժամանակ գրավոր տեղեկացնում է նաեւ լիազոր մարմնին, որն էլ իր հերթին այդ մասին հայտնում է արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման մարմնին: Առանց անձը հաստատող փաստաթղթի անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում բժշկ-հոգեբույժը կամ հոգեբուժական հանձնաժողովը գրավոր տեղեկացնում են իրավապահ մարմիններին բուժման փաստի վերաբերյալ:

19. Հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը գրավոր սահմանում է հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան իրազեկելու համար պատասխանատու անձանց:

20. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը սույն ընթացակարգի 16-րդ կետին համապատասխան թարգմանչի միջոցով իրազեկվում է այն լեզվով եւ այն եղանակով, որը հասկանալի է տվյալ անձի համար: Ընդ որում, տվյալ իրավունքների, իրավունքների սահմանափակումների իրազեկումը ներառում է նաեւ դրանց իրականացման մեխանիզմների պարզաբանումը: Սույն կետով սահմանված կարգը տարածվում է նաեւ անձի իրավունքների բանավոր իրազեկման կարգի վրա: Թարգմանչի ծախսերը փոխհատուցվում են հոգեբուժական կազմակերպության կողմից:

21. Եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, ելնելով իր առողջական վիճակից, ի վիճակի չէ հասկանալ իր իրավունքները կամ ստորագրել իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքների եւ պարտականությունների մասին իրազեկվում է միայն նրա օրինական ներկայացուցիչը, եթե այդպիսին առկա է, որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը: Դրա մասին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:



22. Եթե հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձն իր առողջական վիճակից ելնելով չի ստորագրել իրազեկման թերթիկը, ապա դրա վերաբերյալ նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում, իսկ անձի առողջական վիճակի բարելավման դեպքում տվյալ անձը իրազեկվում է իր իրավունքների, իրավունքների սահմանափակումների մասին եւ նրան առաջարկվում է ստորագրել իրազեկման թերթիկը, իսկ դրանից հրաժարվելու դեպքում կրկին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

23. Անկախ տվյալ անձի տվյալ հոգեբուժական կազմակերպությունում նախկինում բուժվելու փաստից, յուրաքանչյուր անգամ այդ կազմակերպություն ընդունվելու դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, սույն ընթացակարգին համապատասխան, իրազեկվում են իր իրավունքների, իրավունքների սահմանափակումների մասին:»:

## **ՀՈԴՎԱԾ 2.** Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո: ~~հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ~~ընդունվելուց~~ ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479<sup>1</sup>-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479<sup>2</sup>-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479<sup>3</sup>-13.02.2020-ԱՍ-011/0), «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479<sup>4</sup>-13.02.2020-ԱՍ-011/0), «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479<sup>5</sup>-13.02.2020-ԱՍ-011/0), «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479<sup>6</sup>-13.02.2020-ԱՍ-011/1), «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-479<sup>7</sup>-13.02.2020-ԱՍ-011/1), «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (Կ-479<sup>8</sup>-13.02.2020-ԱՍ-011/1) նախագծերի փաթեթի 2-րդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված առաջարկների

Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)	Նախագծի ամբողջ տեքստում «հոգեբուժական կազմակերպություն» բառերը փոխարինել «հոգեկան առողջության կազմակերպություն» բառերով:  <i>Հիմնավորում.</i> Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում բոլոր հոգեբուժական հաստատությունները վերանվանվել են «հոգեկան առողջության կենտրոն» անվանմամբ, ուստի նպատակահարմար է նախագծի ողջ տեքստում կիրառել «հոգեկան առողջության կենտրոն» հասկացությունը:	Չի ընդունվել: ՀՀ օրենսդրությամբ մի շարք իրավական ակտերով կիրառվում է «հոգեբուժական կազմակերպություն» եզրույթը: Ուստի միասնականությունը ապահովելու նպատակով նպատակահարմար է կիրառել «հոգեբուժական կազմակերպություն» եզրույթը:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)	Հանել նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետը:  <i>Հիմնավորում.</i> «Ընտանեկան բժիշկ» հասկացությունը չի կարող սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսանալ:	Չի ընդունվել: Նախագծում տրվել է ինչպես բժիշկ-հոգեբույժի, այնպես էլ ընտանեկան բժշկի հասկացությունը: Ընդ որում, ընտանեկան բժշկի հասկացությունը սույն նախագծում սահմանելը պարտադիր է այն տեսանկյունից, որ սույն նախագծի իմաստով ընտանեկան բժիշկը պետք է պարտադիր ունենա վերջին 5 տարիների ընթացքում հոգեկան առողջության վերաբերյալ թեմաներով վերապատրաստում, որի դեպքում միայն կարող է լիազոր մարմնի կողմից	Ընդունվել է:

			սահմանված ծավալով տրամադրել հոգեբուժական օգնություն և սպասարկում:	
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետում՝</p> <p>ա) «առնվազն երկու բժիշկ-հոգեբույժներից» բառերը փոխարինել «առնվազն 3 հոգեբույժներից (որոնցից մեկը հրավիրվում է այլ բժշկական հաստատությունից)» բառերով:</p> <p>բ) հանել «իսկ ոչ հոժարական հոսպիտալացման դեպքում՝ յուրաքանչյուր դեպքի համար» բառերը:</p> <p><i>Հիմնավորում.</i> Հանձնաժողովը պետք է կազմված լինի կենտ թվով անդամներից, քանի որ տարակարծության դեպքում որոշումը կայացվելու է մեկ ձայնի տարբերությամբ: Կոռուպցիոն ռիսկերի կանխման նպատակով հանձնաժողովի անդամներից մեկը պետք է հանդիսանա այլ բժշկական հաստատության ներկայացուցիչ:</p>	<p>Ընդունվել է: Առաջարկի հիման վրա Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետում կատարվել են փոփոխություններ:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետում՝</p> <p>ա) հանել «տեղաշարժի» բառը:</p> <p><i>Հիմնավորում.</i> Ֆիզիկական զսպման միջոցները կիրառվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեշարժական գրգռված վիճակի զսպման նպատակով ոչ թե՛ տեղաշարժը սահմանափակելու նպատակով: Տեղաշարժը այս դեպքում ինքնին սահմանափակվում է, ուստի այս ձևակերպումը տարրընթերցման տեղիք է տալիս, թույլ տալով ենթադրել, որ ֆիզիկական զսպման միջոցները կարող են կիրառվել նաև միայն տեղաշարժը սահմանափակելու նպատակով, մինչդեռ այդ նպատակով օրենքով սահմանված կարգով կիրառվում են մեկուսացման միջոցներ:</p> <p>բ) «շարժումների» բառը փոխարինել «հոգեշարժական գրգռված վիճակի» բառերով:</p> <p><i>Հիմնավորում.</i> Մասնագիտական գրականության մեջ հոգեկան</p>	<p>Ընդունվել է մասնակի: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետից հանվել են «տեղաշարժի կամ» բառերը, որը փոխարինվել է «պահել» եզրույթով: Ինչ վերաբերում է «շարժումների» բառը «հոգեշարժական գրգռված վիճակի» բառերով փոխարինելուն, ապա այն չի ընդունվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն, ինչպես և «պահել» եզրույթը բխում է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի չափանիշներից (<a href="https://rm.coe.int/16807001c3">https://rm.coe.int/16807001c3</a>):</p>	<p>Ընդունվել է:</p>

		առողջության խնդիրներ ունեցող անձի հոգեկան լարվածությունը ուղեկցող անկանոն շարժումները անվանում են «հոգեշարժական գրգռված վիճակ», ուստի նպատակահամար է օրենքի տեքստում «շարժումներ» բառի փոխարեն սույն իմաստով օգտագործել վերը նշված բառերը:		
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետից հանել «կամ շարժումների» բառերով:  <i>Հիմնավորում.</i> Մեկուսացումը չի ենթադրում անպայման նաև ֆիզիկական զսպման միջոցի կիրառում, ուստի սահմանափակվում է միայն անձի տեղաշարժը և ոչ թե շարժումները:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետից «կամ շարժումների» բառերը հանվել են:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Նախագծի 5-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ նոր 21-րդ կետով. «21. կեցության արժանապատիվ պայմաններում բնակվելու իրավունքը»:  <i>Հիմնավորում.</i> Մարդու հիմնարար իրավունքներից է ունենալ այնպիսի կենսամակարդակ, ներառյալ սնունդը, հագուստը, բնակվելու պայմանները, որն անհրաժեշտ է իր առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացվել է 5-րդ կետ և 7-րդ մաս:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Նախագծի 6-րդ հոդվածի երկրորդ մասում «չափահաս» բառը փոխարինել «16 տարին լրացած» բառերով:  <i>Հիմնավորում.</i> Համաձայն ՀՀ օրենսդրության՝ չափահաս անձ է համարվում 18 տարին լրացած անձը: Մինևույն ժամանակ, համաձայն ՀՀ Բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մարդկանց բուժման նպատակով սույն հոդվածով նախատեսված հետազոտությունները և փորձարկումները կարող են իրականացվել միայն նրանց իրազեկված գրավոր համաձայնության դեպքում, իսկ նույն օրրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, 16 տարին լրացած երեխան բժշկական միջամտության	Ընդունվել է: Կտարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		համար իրազեկված համաձայնություն տալու իրավունք ունի:		
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների ցանկը սահմանում է լիազոր մարմինը»:  <i>Հիմնավորում.</i> Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման հիմքերը սահմանված են նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների ցանկը պետք է սահմանի լիազոր մարմինը:	Չի ընդունվել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառումով սահմանափակվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավունքները, ուստի որպես երաշխիք անհրաժեշտ ենք համարում բացի ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման հիմքերից և ընթացակարգային այլ հարցերից, օրենքի մակարդակով սահմանել նաև դրանց կիրառման բժշկական ցուցումները:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներ կիրառման հակացուցումների ցանկը սահմանում է լիազոր մարմինը»:  Ինչպես ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդներ կիրառման բժշկական ցուցումները, այնպես և հակացուցումները պետք է հստակ սահմանված լինեն լիազոր մարմնի կողմից:	Չի ընդունվել: Ի տարբերություն ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման բժշկական ցուցումների, հակացուցումների ցանկը սպառիչ հնարավոր չէ սահմանել, դրանք ի հայտ են գալիս յուրաքանչյուր անհատական դեպքով: Այդ է պատճառը, որ որպես երաշխիք սահմանվել են ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների եւ հանդարտեցման մեթոդների կիրառման առավելագույն տևողությունը, դրանց կիրառման ամբողջ ժամանակահատվածում պացիենտին մշտապես հսկողության տակ պահելու բուժանձնակազմի պարտականությունը, ինչպես նաև յուրաքանչյուր անհատական դեպքով դրանց կիրառման հակացուցումները հաշվի առնելու բժիշկ-հոգեբույժի պարտականությունը:	Ընդունվել է:
Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան	«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը հանել:  <i>Հիմնավորում.</i> Նշված հասկացությունը արդեն իսկ սահմանված է սույն նախագծի 3-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետում:	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը հանվել է, ինչով պայամանավորված 8-րդ հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է:

	(Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)			
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)</p>	<p>Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «8.Կառավարության սահմանած կարգին համապատասխան դեղերի անվճար տրամադրումը:»:</p> <p><i>Հիմնավորում.</i> Հոգեբուժական օգնության և սպասարկում տրամադրման մի մաս է կազմում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հատուկ հոգեմետ դեղերով ապահովումը, ուստի այն ինչպես և հոգեբուժական օգնության տրամադրումը պետք է լինի անվճար:</p>	<p>Չի ընդունվել: Նշված հարցը յուրաքանչյուր տարի որոշվում է պետական բյուջեի վերաբաշխումներով:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)</p>	<p>Նախագծի 11-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «6.Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց անգիետաձգելի հոգեբուժական օգնությունը եւ սպասարկումը տրամադրվում է անվճար:»:</p> <p><i>Հիմնավորում.</i> Այն դեպքերում, երբ օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք իրենց հոգեկան վիճակի պատճառով կարող են վտանգ ներկայացնել իրենց կամ այլ անձանց համար, պետության երաշխիքը պետք է լինի պետության միջոցների հաշվին անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ անհետաձգելի հոգեբուժական օգնություն տրամադրելը:</p>	<p>Ընդունվել է: կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)</p>	<p>Նախագծի 12-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ նոր 6-րդ կետով.</p> <p>«6. ապահովում է արժանապատիվ կեցության պայմաններ:»</p> <p><i>Հիմնավորում.</i> Մարդու հիմնարար իրավունքներից է ունենալ այնպիսի կենսամակարդակ, ներառյալ սնունդը, հագուստը, բնակվելու պայմանները, որն անհրաժեշտ է իր առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար:</p>	<p>Ընդունվել է: Նշված առաջարկն ընդունվել է, սակայն սահմանվել է, որ հոգեկան առողջության կազմակերպությունում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի կեցության պայմանները սահմանում է լիազոր մարմինը:</p>	<p>Ընդունվել է:</p>

<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Նախագծի 19-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխել նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:</p> <p><i>Հիմնավորում.</i> Ելնելով նրանից, որ սույն օրենքն ունի առանձին հոդված, որում սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ավելի նպատահարմար է բոլոր հասկացությունների սահմանումները տեղափոխել այդ հոդված:</p>	<p>Ընդունվել է: 19-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխվել է նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Ազգային ժողովի պատգամավոր Նարեկ Զեյնալյան</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Նախագծի 20-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխել նույն օրենքի նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:</p> <p><i>Հիմնավորում.</i> Ելնելով նրանից, որ սույն օրենքն ունի առանձին հոդված, որում սահմանված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ավելի նպատահարմար է բոլոր հասկացությունների սահմանումները տեղափոխել այդ հոդված:</p>	<p>Ընդունվել է: Նախագծի 20-րդ հոդվածի առաջին մասը տեղափոխվել է նախագծի 3-րդ հոդվածի առաջին մաս:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20</p>	<p>«Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Առաջարկում ենք նախագծում բոլոր «ոչ հոժարակամ» բառերը փոխարինել «հարկադիր» բառով:</p>	<p>Չի ընդունվել: Նախագծով սահմանվում է «ոչ հոժարակամ» և «հարկադիր» բուժում հասկացությունները: Հարկադիր բուժումը նշանակվում է քրեական գործի շրջանակներում, իսկ ոչ հոժարակամ բուժումը նշանակվում է քաղաքացիական դատավարության կարգով, երբ անձը իր կամ շրջապատի համար վտանգ է ներկայացնում: Վերոգրյալից ելնելով, և հաշվի առնելով ընթացակարգային տարբերությունները, նպատակահարմար է նշված եզրույթները կիրառել տարբեր անվանումներով:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20</p>	<p>«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479<sup>3</sup>-13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Առաջարկում ենք նախագծում բոլոր «ոչ հոժարակամ» բառերը փոխարինել «հարկադիր» բառով:</p>	<p>Չի ընդունվել: Նախագծով սահմանվում է «ոչ հոժարակամ» և «հարկադիր» բուժում հասկացությունները: Հարկադիր բուժումը նշանակվում է քրեական գործի շրջանակներում, իսկ ոչ հոժարակամ բուժումը նշանակվում է քաղաքացիական դատավարության կարգով, երբ անձը իր կամ շրջապատի համար վտանգ է ներկայացնում: Վերոգրյալից ելնելով, և հաշվի առնելով ընթացակարգային</p>	<p>Ընդունվել է:</p>

			<p>տարբերությունները, նպատակահարմար է նշված եզրույթները կիրառել տարբեր անվանումներով:</p>	
<p>ԲՀԿ խմբակցություն Որոշում 38/20</p>	<p>«Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479<sup>5</sup> -13.02.2020-ԱԱ-011/0)</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 47<sup>15</sup>. Հարկադիր հասպիտալացման կարգը խախտելը</p> <p>1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հարկադիր հոսպիտալացնելուց հետո հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում հոգեբուժական հանձնաժողով չհրավիրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:</p> <p>2. Հարկադիր հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու համար հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում դատարան չդիմելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսուներկու անգամից չափով:</p> <p>3. Հիվանդանոցային հարկադիր բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժի կողմից ամիսը առնվազն մեկ անգամ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:</p> <p>4. Մինչև օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ հարկադիր բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից հարկադիր հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով դատարան չդիմելը՝</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է:</p>



		<p>առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրիսնապատիկի չափով:</p> <p>5. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:»:</p> <p>Նախագծերի փաթեթին ներկայացված առաջարկները նպատակ ունեն պահպանելու իրավական որոշակիության սկզբունքը, ինչը այս պարագայում հնարավոր է հարկադիր, այլ ոչ թե ոչ հոժարական բառերի օգտագործման միջոցով: Հարկ է նշել, որ թե քրեական, թե քրեակատարողական օրենսգրքերը օգտագործում են հարկադիր բուժում բառերը, իսկ դրանց օգտագործումը այդ օրենսգրքերում ոչ միայն արգելք չէ այլ իրավական ակտերում դրանց կիրառման համար, այլև ընդհակառակը, դրանով պահպանվում և հստակեցվում է օրենսդիրի նպատակը և կամքը:</p> <p>Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին վերաբերելի առաջարկները ուղղված են որոշ դեպքերում տուգանքի չափը հստակեցմանը՝ պայմանավորված միասնական մոտեցման ցուցաբերմամբ, մյուս կողմից առաջարկները ուղղված են տուգանքների խստացմանը՝ զանցանքի վտանգավորության աստիճանի հիմքով:</p>		
<p>Հայաստանի Հանրապետության կառավարություն</p>	<p>&lt;&lt;Հոգեբուժական օգնության մասին&gt;&gt; օրենքում փոփոխություն կատարելու մասին»» (Կ-479-13.02.2020-ԱՍ-011/0)</p>	<p>Առաջարկվում է նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել նաև բժշկական գաղտնիք համարվող տվյալները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված կարգով ստանալու իրավասություն սահմանել նաև Ոստիկանության համար՝ վարորդական իրավունք տրամադրելու (փոխանակելու), զենքի շրջանառությունը վերահսկելու, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման նպատակով:</p>	<p>Ընդունվել է: Համապատասխան լրացումը կատարվել է Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>Հայաստանի Հանրապետության</p>	<p>&lt;&lt;Հոգեբուժական օգնության մասին&gt;&gt;</p>	<p>Առաջարկվում է զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները</p>	<p>Ընդունվել է: Նախագծի 18-րդ հոդվածում լրացվել է նշված բովանդակությամբ 5-րդ մաս:</p>	<p>Ընդունվել է:</p>

կառավարություն	օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	սահմանել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Առաջարկվում է 8-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել, որ բժիշկ-հոգեբույժը հենց ֆիզիկական զսպման ենթարկված անձին է 30 րոպե պարբերականությամբ զննում:	Ընդունվել է: Նշված առաջարկը բանավոր կարգով հնչեցրել է «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից, որի հիման վրա կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	<<Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-479-13.02.2020-ԱԱ-011/0)	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «ընդունվելուց» բառերը փոխարինել «ուժի մեջ մտնելուց» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (Կ-479 <sup>8</sup> -13.02.2020-ԱԱ-011/1)	Առաջարկվում է զինծառայողներին հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկել գնդի հրամանատարի կողմից՝ ըստ բժշկի գրավոր եզրակացության: Եզրակացությանը կցվում են զինծառայողի բժշկական և ծառայողական բնութագրերը, որոնց ձևը սահմանում է պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը: Զորամասի բուժկետը վարում է հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված զինծառայողների գրանցման գիրք: Հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված բոլոր զինծառայողները ենթարկվում են ռազմաբժշկական փորձաքննության:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է 2-րդ հոդվածով:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» (Կ-479 <sup>8</sup> -13.02.2020-	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «հոդվածի 7-րդ մասում» բառերը փոխարինել «հոդվածում» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

	ԱՍ-011/1)			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (Կ-479 <sup>3</sup> -13.02.2020-ԱՍ-011/1)	Առաջարկվում է նախագծում կատարել հետևյալ տեխնիկական փոփոխությունները. Նախագծի 1-ին հոդվածից հանել մասերը և այն շարադրել մեկ հոդվածի տեսքով, 2-րդ հոդվածում 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Կ-479 <sup>3</sup> -13.02.2020-ԱՍ-011/0)	Առաջարկվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների տրամաբանությունից ելնելով, Նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 270 <sup>1</sup> հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները. Սահմանել որ վճռի վերացման դեպքում դատարան կարող է դիմել այն հոգեբուժական կազմակերպությունը, որտեղ գտնվում է ոչ հոժարակամ բուժման ենթարկված քաղաքացին և դատարանը վճիռը կայացնելու է հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով օրենսգրքում լրացվող 270 <sup>1</sup> հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն		«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը: Վերոգրյալից ելնելով առաջարկում են նախագծերի փաթեթի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել պաշտոնական հրապարակման պահից երեք ամիս հետո:	Ընդունվել է: կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: